

24(526)
14.09.2018
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՆՈՐ «ԱՐՄԱՑ»-ՆԵՐ ԱՐՅԱԽՈՒՄ



ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության, Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) համատեղ նախաձեռնությամբ և «ՅուՆիսեֆ» բաց բաժնետիրական ընկերության հովանավորությամբ Քաջաթաղի շրջանի Իշխանաձորի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ և Ասկերանի Էդոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցներում բացվեցին «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ: Դրանց թիվը Արցախում դարձավ 13:

Իշխանաձորում ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱՏՁՄ ինժեներական լաբորատորիաների ծրագրի համակարգող Անդրեյ Կարգանյանը, Քաջաթաղի շրջվարչակազմի ներկայացուցիչներ՝ աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, վարչա-

կազմի ղեկավարի օգնական, «Հայրենասեր» ՀԿ համահիմնադիր Ստեփան Սարգսյանը, կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, համայնքի ղեկավարը: Լաբորատորիայի բացման պատիվը տրվեց դպրոցի սաներին:

Ողջունելով ներկաներին, շնորհավորելով դպրոցի անձնակազմին՝ Ս. Վարդանյանը կարևորեց «Արմաթ»-ի դերը. «Ինժեներական լաբորատորիաները բացառիկ հնարավորություն են ընձեռում աշակերտներին՝ առնչվելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, ինժեներական մասնագիտությունների տիրապետմանը, եռաչափ մոդելավորմանը, դիզայներական հմտություններին, ինչպես նաև կատարելու մասնագիտական կողմնորոշում»: Այնուհետև հավելեց, որ իրենք մասն լաբորատորիաների տեղադրման առաջնահերթությունը տալիս են ծայրամասային գյուղերի դպրոցներին: Սրանով նպաստում են նաև տեխնիկական ճանապարհով համայնքային խնդիրների լուծմանը: Հավելեց, որ շրջաններում երեխաներն ավելի

նպատակասլաց են:

Դպրոցի փոխտնօրեն Արմինե Մաթևոսյանը, շնորհակալություն հայտնելով, նույնպես կարևորեց «Արմաթ»-ի նշանակությունը. «Մեր դպրոցում ձևավորվեց ևս մի խմբակ-դասարան, որի բացման խորհրդանշի կենտրոնում մարդկային միտքն է, որից ծնվում են գյուտեր: Այն կնպաստի ստեղծարար մտածելակերպի զարգացմանը, կօգնի ծանոթանալ SS աշխարհի տանող ճանապարհին, քայլել նորարարություններին զուգընթաց»: Ներկայացնելով դպրոցի սաներին՝ ասաց, որ նրանց մեջ կան շատերը, որոնք ի վիճակի են սովորել և իրենց յուրացրածն են ցուցնել համայնքի ու բանակաշինության կյանքում: Ապա հույս հայտնեց, որ իրենց աշակերտները ևս կմասնակցեն «Արմաթ»-ի մրցույթներին և կհաղթեն:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը կարևորեց խմբակի դերը, որ այն կնպաստի դպրոցի և համայնքի զարգացմանը ու ամենակարևորը՝ աշակերտների ունակությունների, կարողությունների բացահայտմանը:

«ՅուՆիսեֆ» ԲԲԸ վարչության անդամ, մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքի տնօրեն Գուրգեն Ղուկասյանը նույնպես շնորհավորեց իշխանաձորիցներին՝ ասելով, որ իրենց բանկը մշտապես օժանդակում է նման ծրագրերին. երեք նմանատիպ լաբորատորիաներ բացել են Շիրակի և Տավուշի մարզերում և 2-ն Արցախում՝ Իշխանաձորում և Ասկերանում:

- Սրանով փորձում ենք մեր ներդրումն ունենալ Արցախի աշակերտների ուսուցման մակարդակի բարձրացման և ապագայի ստեղծման գործում,- ասաց Գ. Ղուկասյանը: Խմբակները գործելու են ամվճար: Իշխանաձորում խմբակի դասընթացներին կարող են մասնակցել նաև հարևան համայնքների աշակերտները:

Միջոցառման վերջում ներկաների համար ելույթ ունեցան Բերձորի արվեստի դպրոցի պարարվեստի խմբի Իշխանաձորի մասնաճյուղի սաները:

Ջոհրաբ ԸՈՒՅՈՒՆ

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԸ

ՆՈՐ ԱՆԱԿՆԿԱՆՆԵՐՈՎ

Ճարտարի Արա Ավանեսյանի անվան հ.2 հիմնական դպրոցում հաճելի անակնկալներով տրվեց 2018-2019 ուսումնական տարվա մեկնարկը:

Օրվան նվիրված միջոցառմանը ներկա էին բարերար Աշոտ Ջիվանյանը, նրա հարազատները, Ճարտարի քաղաքապետ Արթուր Արաբելյանը, դպրոցի թոշակառու ուսուցիչներ:



Քաղաքապետ Ա. Աղաբալյանը ներկայացրեց Աշոտ Ջիվանյանի ֆինանսական միջոցներով դպրոցում կատարված ծավալուն աշխատանքները և նշեց, որ նախատեսվում է նաև ճիստերի դահլիճի կառուցում:

Դպրոցը կառուցվել է 2005թ. պետական միջոցներով: Ա.Ջիվանյանը հարազատ դպրոցի համար ներդրումներ է կատարում 2006 թվականից սկսած: Նրա ֆինանսավորմամբ հիմնադրվել է դպրոցի 9 դասասենյակ և կահավորվել անհրաժեշտ պարագաներով: Կատարվել են նաև դպրոցի արտաքին տեսքի բարելավման աշխատանքներ: 2018թ. սկսվել է սանհանգույցի վերանորոգման աշխատանքը:

Ամեն տարի լրացվում է դասագրքերի պակասը, դպրոցը համարվում համակարգիչներով: Ամենամյա հաճելի ավանդույթ է դարձել բարերարի կողմից ուսումնական տարվա մեկնարկին 1-ին դասարանցիներին նվերներով, առարկայական օլիմպիադաներում առաջնակարգ տեղեր գրաված աշակերտներին ու նրանց ուսուցիչներին դրամական պարգևներով խրախուսելը, ինչպես նաև գերազանց և հարվածային աշակերտների հայրենաճանաչողական երկուրտիաների կազմակերպումը դեպի Հայաստանի և Արցախի տեսարժան վայրեր:

Տնօրեն Հայկազ Բաղդյանը շնորհակալություն հայտնեց Աշոտ Ջիվանյանին՝ կատարվող աշխատանքների համար: Քաղաքապետ Ա. Աղաբալյանը և տնօրեն Հ. Բաղդյանն առանձնահատուկ ակնածանքով խոսեցին բարերարի մարդասիրական բարձր որակների, մեծ արժանիքների ու հայրենասիրության մասին:

1-ին դասարանցիներին ողջունեց շրջորոցի Նարեկ Բաբաջանյանը, ապա ելույթ ունեցան 1-ին դասարանցիները, գեղարվեստական համարներով՝ դպրոցի աշակերտները:

Օրվա հերոսներին ուղղված շնորհավորանքի խոսք ասաց վաստակավոր մանկավարժ Բաբկեն Սաֆարյանը, որը շերտար տարիներ եղել է դպրոցի տնօրենը: Այսօր դպրոցը նրա անվամբ դասասենյակ ունի: Աճող սերնդին վաստակաշատ մանկավարժը երջանիկ է համարում, քանզի նրանց ուսման համար ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ դրանում ընդգծելով բարերար Ա.Ջիվանյանի առաքելությունը:

Ճարտարում 2018թ. հունվարից բարերարի տնօրինությամբ գործող «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության կողմից դպրոցի շեն առաջին անգամ ոտք դրած երեխաներին և նրանց դասավորներ Ռուզաննա Ավանեսյանին ու Լորետա Աղամայանին նվերներ, իսկ օլիմպիադաների շրջանային, հանրապետական և եզրափակիչ փուլերում բարձր ցուցանիշներ գրանցած աշակերտներին ու նրանց ուսուցիչներին դրամական պարգևներ հանձնեցին ընկերության ներկայացուցիչ Արմինա Գրիգորյանը և խորհրդի անդամ Արմինե Քամայանը:

Առաջին դասարանցիներին, նրանց ծնողներին և ուսուցչական կոլեկտիվին շնորհավորանքի և բարեմաղթանքի ջերմ խոսքեր հղեց Աշոտ Ջիվանյանը:

Առաջին զանգին նվիրված միջոցառման ավարտից հետո տեղի ունեցավ բարերարի միջոցներով վերանորոգված, արդի պահանջներին համապատասխան սանհանգույցի բացումը:

ԽՈՍՏՈՒՄՆԱԿՆԻ ՀԵՈՒՆԿԱՐՈՎ

Քերթի Կոմիտաս Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի 2018-2019 ուսումնական տարվա մեկնարկը շնորհավորելու էին եկել շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Ջորիկ Ղուլյանը, բարերար Աշոտ Ջիվանյանն իր հարազատների հետ, Ճարտարի քաղաքապետ Արթուր Աղաբալյանը, համայնքի ղեկավար Կինա Գրիգորյանը, հյուրեր:

Ճարտարի «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության ներկայացուցիչ Արմինա Գրիգորյանը և խորհրդի անդամ Արմինե Քամայանն ընկերության կողմից 9 առաջին դասարանցիներին և դասվար Ռաիսա Գրիգորյանին բաժանեցին գրենական պիտույքներ: Ա.Ջիվանյանի տնօրինությամբ գործող ընկերությունն առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում և միջազգային մրցույթներում մրցանակային տեղեր գրավեցրած մի խումբ աշակերտների պարգևատրեց դրամական պարգևով:

Ողջունել ու շնորհավորանքի խոսքով միջոցառմանը բացեց փոխտնօրեն Լիմրա Համբարձումյանը:

Տնօրեն ժիրայր Հայրապետյանն իր շնորհավորական ու շնորհակալական ելույթում նախադրաբանավ բարերար Աշոտ Ջիվանյանի ֆինանսական միջոցներով դպրոցում իրականացված աշխատանքներին: Բարերարի միջոցներով վերանորոգվել է մարզադահլիճը հանդերձարաններով և կահավորվել համապատասխան գույքով, վերանորոգվել է ֆիզիկայի կաբինետը:

2017-2018 ուստարում առարկայական օլիմպիադայում և մանկապատանեկան միջազգային մրցույթներում առաջնակարգ տեղեր գրաված աշակերտները և ուսուցիչները խրախուսվել են դրամական պարգևով:

Պահի դրությամբ հիմնովին վերանորոգվում է նախկին մանկապարտեզին հատկացված մասնաշենքը: Վերջինս նախատեսված է ավարտել մինչև 2019թ. հունվար ամիսը: Առաջիկայում նախատեսվում են դպրոցական շենքի բարեկարգման մի շարք աշխատանքներ:

Ի նշան բարերար Ա.Ջիվանյանի հանդեպ տածած խորին երախտագիտության՝ ժ.Հայրապետյանը կոլեկտիվի անունից նրան հանձնեց գովասանագիր և նվիրեց Արցախի Պապ ու տատը խորհրդանշող նկար: Տնօրենն ուսման մեջ առաջադեմ մի խումբ աշակերտների հանձնեց ԱՀ ԿԳՍ նախարարության պարգևները:



- Իմ ապրած 50 տարիների ընթացքում առաջին անգամ մասնակցում եմ մայրիկիս ծննդավայրի՝ իմ պապուց շենի Առաջին զանգի արարողությանը,- իր ելույթում հպարտորեն նշեց Ա.Ջիվանյանը:

Կարևորելով կրթության դերը հայրենիքի ապագա պաշտպանի, գիտնականի, բժշկի, մանկավարժի, շինարարի, գյուղատնտեսի ձևավորման գործում՝ բարերարն ասաց, որ դպրոցում է դրվում հայրենասիրության պատվաճանաչի ամուր հիմքը, որին հասնելու միակ ուղին բարձրակարգ ուսումն է: Նա առանձնակի ակնածանքով խոսեց ուսուցիչների մասին՝ նրանց անվանելով Լուսավորիչներ: Նրա խորին համոզմամբ՝ հայրենիքի բարեկեցության շենացման ուղղությամբ յուրաքանչյուր գործ հայրենասիրության վառ օրինակ է: Ամեն ոք պիտի գիտակցի, որ հայրենասիրության գործում իր բա-

ժին քարը պիտի դնի՝ ամուր կառույցի համար: Շնորհավորելով առաջին դասարանցիներին, նրանց ծնողներին, բոլոր ուսուցիչներին Գիտելիքի օրվա և Անկախության տոնի կապակցությամբ՝ մաղթեց, որ ուսման մեջ առաջադիմությունը դառնա գերազույն նպատակ, իսկ դրա իրականացման ճանապարհին ինքը կանգնած կլինի ուսուցիչների կողքին:

Աշոտ Ջիվանյանի և Քերթի դպրոցի կոլեկտիվի հանդեպ տածած յուրօրինակ սիրով ու քնքշությամբ էր լեցուն վաստակաշատ մանկավարժ Բաբկեն Սաֆարյանի ելույթը:

Բարերարին ուղղված սրտի խոսք ասաց շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Ջ. Ղուլյանը:

Շնորհավորանքի ու շնորհակալական խոսքով հանդես եկավ փոխտնօրեն Ստեփան Ղուլյանը:

Կոմիտաս Հակոբյանի մարտական ընկեր Սամվել Պետրոսյանը, որի բարեգործությունն ամենամյա գեղեցիկ ավանդույթ է դարձել, այս տարի ևս 1-ին դասարանցիներին դպրոցական պայուսակներ, նախադպրոցական խմբի երեխաներին խաղալիքներ նվիրեց:

Ա.Ջիվանյանի հոր՝ Մաքսիմ Ջիվանյանի ելույթը լի էր հպարտությամբ:

Քերթի դպրոցում գործող գեղարվեստական խումբը ներկայացավ գեղեցիկ կատարումներով և բյուր շնորհավորանքներ հղեց ուսուցիչներին, աշակերտներին՝ վերաբերվելով Գիտելիքի, գրի ու դպրության դերն ու նշանակությունը: Ապա 12-րդ դասարանի աշակերտուհի Ալյոնա Հայրապետյանի և 1-ին դասարանի աշակերտ Գոռ Գրիգորյանի կողմից հինգ ուսումնական տարվա առաջին զանգը:

Առաջին զանգին նվիրված միջոցառման ավարտից հետո տեղի ունեցավ հիմնադրված մարզադահլիճի հանդիսավոր բացումը: Ժապավենը կտրելու պատիվը տրվեց բարերար Ա.Ջիվանյանին և տնօրեն ժ.Հայրապետյանին:

Աշոտ Ջիվանյանն առանձնազորույց ունեցավ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, լսեց նրանց մտահոգությունները, հուզող խնդիրները, որոնք են՝ դպրոցի շենքի և գյուղամիջյան ճանապարհների անբարեկարգ, հանդիսությունների տան անմխիթար վիճակը, մանկապարտեզի շենքի բացակայությունը: Բարերարը ներկայացրեց այս ուղղությամբ իր ծրագրերը: Մանկավարժական կոլեկտիվը պատրաստակամություն հայտնեց տեր կանգնել գյուղին և շենացնել այն:

Ա.Ջիվանյանի առաջարկությամբ և ներկաների համաձայնությամբ որոշվեց ընտրել Քերթի օր: Այն կընդունվի գյուղի ավագանու որոշմամբ:

Հարկ է նշել, որ Քերթի դպրոցի շենքը 1975 թվականի ոչ տիպային՝ հարմարեցված կառույց է: Դպրոցում սովորում է 84 աշակերտ, աշխատում՝ 30 ուսուցիչ: 2017-18 ուսումնական տարում դպրոցը թողարկել է 12 շրջանավարտ:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՇԵՆԱՍՅՈՒՆ

Նորարարական մեթոդներով աշակերտներին գիտելիքներ փոխանցելու համար կրթօջախներում անհրաժեշտ են համապատասխան պայմաններ: Դրանք նպաստում են սովորողի ինքնուրույն մտածելուն, ստեղծագործելուն, դասի արդյունավետության բարձրացմանը:

Ցավոք, մեր կրթական համակարգը հաջողությունների կողքին ունի նաև բազում խնդիրներ, որոնք խոչընդոտում են սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու նախադասարարական համակարգում նրանց կողմնակի ու ներդաշնակ զարգացմանը:


Մարտունու շրջանի Բերդաշենի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի մուտքում տեղադրված պատվո տախտակին կողք կողքի շարված պատվոգրերը հուշում են դպրոցի հաջողությունների ու ձեռքբերումների մասին:

Տնօրեն Արտակ Զարգարյանն առանձնահատուկ ոգևորությամբ է խոսում հաջողությունների մասին, միևնույն ժամանակ նշում, որ դպրոց ունի չլուծված խնդիրներ:

222 աշակերտ ունեցող կրթօջախում աշխատում է 28 ուսուցիչ, 15 սպասարկող անձնակազմ: 2017-2018 ուստարում դպրոցը թողարկել է 11 շրջանավարտ, նոր ուսումնականում նրանց փոխարինել է 24 առաջին դասարանցի: Ա.Զարգարյանը շեշտեց, որ վերջին հինգ տարվա ընթացքում նկատվում է աշակերտների քանակի աճ:

Մասնագետների կարիք դպրոցը չունի: «Ունենք ավագ, միջին և

երիտասարդ տարիքի, նաև՝ «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչումով մանկավարժներ: Վերջին հինգ տարում ընթացքում վաստակած հանգստի ենք ուղարկել 10 ուսուցիչ: Հոկտեմբեր ամսին լրանում է մաթեմատիկայի մասնագետի կենսաթոշակային տարիքը, նրան թոշակի ուղարկելու դեպքում կունենանք մաթեմատիկայի մասնագետի կարիք»,- ասաց տնօրենը:



Մեր գրույցի ընթացքում Ա.Զարգարյանը նշեց, որ տարիներ շարունակ դպրոցը առարկայական օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում հաջողություններ է գրանցել ինչպես շրջանային, այնպես էլ համապետական ու եզրափակիչ փուլերում, որն ուսուցիչների քրտնաջան աշխատանքի արդյունք է: ԱԶ ԿԳՍ նախարարության պետական տեսչության ստուգումների արդյունքում դպրոցը գնահատվել է «լավ»:

- Յուրաքանչյուր առարկայի համար դպրոցն ունի համապատասխան կահավորվածությամբ հագեցած կաբինետ: Ունենք հա-

մակարգչային բազմաֆունկցիոնալ կաբինետ, որտեղ յուրաքանչյուր առարկայից կազմակերպվում է ժամանակակից մեթոդներով դաս: Սակայն համակարգիչները թարմացման կարիք ունեն,- ասաց տնօրենը:

Արդյունավետ աշխատելու, փորձի փոխանակման նպատակով դպրոցի կողեկիտիվն ակտիվ մասնակցություն է ունենում Բերդաշենի ենթաշրջանում գործող փնջային մեթոդավորման կազմակերպած ընդօրինակման դասերին:

Լեզենդար հերոսի անունը կրող դպրոցը սերտ համագործակցում է նաև շրջանի տարածքում տեղակայված Ն գործնախի հետ՝ տարվա ընթացքում կատարելով փոխադարձ այցելություններ, իսկ տարին երկու անգամ՝ հունվարի 28-ին և մայիսի 9-ին, ծանրոցներ ուղարկում սահմանապահ զինվորներին:

Նոր սերնդի մեջ ռազմահայրենասիրությունը բարձրացնելու նպատակով դպրոցում յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվում է հուշ-ցերեկույթ՝ նվիրված հայրենի գյուղի տվյալ ամսվա ծնված զոհված զառամարտիկների հիշատակին:

Ա.Զարգարյանը խոսեց նաև վերջին տարիներին կատարած աշխատանքների մասին. «2005 թվականից սկսած դպրոցում գործում է կենտրոնացված քեռուցման համակարգ, նախորդ տարի կառուցվել է նոր կաթսայատուն, ու լրիվությամբ փոխվել ենք ջեռուցման համակարգը: Սակայն դպրոցի շենքի

հիմնանորոգման, ջրահեռացման և բակի բարեկարգման աշխատանքները մնում են դեռ չլուծված: Ամմիթիթար վիճակում են դպրոցի նկուղային հարկում գործող մարզադահլիճը և մարզական գույքը: Բարենպաստ եղանակներին պարամունքներն անց են կացվում բացօթյա, իսկ ծմռան շրջանում խնդրի առաջ ենք կանգնում»,- ընդգծեց նա:


Խոսելով կրթական ծրագրերից՝ տնօրենը մտահոգություն հայտնեց դասաժամերի անհամաչափ բաշխվածության վերաբերյալ, մասնավորապես նշեց, որ 10-րդ դասարանում ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից մեկական դասաժամ կրճատվել է և մտցվել դպրոցական բաղադրիչի մեջ, որը դժվարություններ է առաջացնում սահմանված ծրագրով առաջնորդվելու գործում:

Կրթությունը մեր երկրի ռազմավարական ոլորտներից է, ուստի պետք է ջանք չխնայվի՝ սովորողներին գիտելիքների նոր պաշարով ու ազգապահպան գաղափարներով զինելու համար: Դպրոցը երկրի կարևոր հենասյուներից է, որտեղ կրթվում, դաստիարակվում է ապագա բաղաբացի՝ ազգային հոգազործն ու շինարարը, նախարարն ու դատավորը, ուսուցիչն ու բժիշկը...

Նոր ուսումնականի առթիվ Ա.Զարգարյանը շնորհավորեց բոլոր աշակերտներին, մաղթեց առողջություն, հաջողություններ ուսման մեջ, Արցախի աշխարհին՝ խաղաղություն: Իսկ հասարակությանը կոչ արեց բարձր գնահատել ուսման դերակատարությունը:

Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ

ՆՈՐԻՑ ԲԵՋ ՇԵՏ



Ուսուցիչ ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է, նրա ցանած սերմերի աճի մեջ:

Գ. Մեղեղեն

Ողջո՛ւյն, երջանակահիշատակ իմ հպարտ ուսուցիչ, գործընկեր և ընկեր: Վստահորեն գրուցում եմ քեզ հետ, քանզի համոզված եմ, որ երկնային կյանքի քո բարձունքից տեսնում ու լսում ես ինձ... Իմ ընկեր Հարությունան, իմ ավագ ընկեր ու խորհրդատու, մաթեմատիկայի իմ ուսուցիչ ու մարտական ճանապարհի իմ անդամաճան ուղեկցորդ, նորից քեզ հետ եմ ու նորից այն իհն ու բարի օրերի վերհուշով մեծանում եմ քեզ հետ... Դու կաս, դու ապրում ես, ապրում ես ապրող, արարող սաներիդ հուշերում, զավակներիդ մշտաբաբախ սրտերում, հարազատ դպրոցիդ մանկավարժական կոլեկտիվում և, վերջապես, ապրում ես մոլորական անխախտ բանաձևումով. «Մահ չկա, մեռնում է փոքրոգին, մեռածն է մեռնում...»:

Գրիշա Հարությունյան, մեծահոգի իմ ընկեր ու բարեկամ, շնորհավորո՞ւմ քեզ 80-ամյակը: Այրած ու վաստակած տարիներ, պատասխանատու տարիներ, երջանիկ մարդ, ում հաջողվեց լիարժեք վայելել իր անվան կերպարը՝ մանկավարժի կերպարը... Լավագույն մանկավարժ, այսօր այնպես վարպետորեն էր քեզ հաջողվում հնազանդ դարձնել գիտությունների թագուհուն, խրթին խնդիրները թաժնում էիր պար՛ու ու մատչելի, իսկ քեզ համար ցանկացած թերեմի համար միշտ էլ ապացույց կար... Իսկ այսօր, առանց չափազանցման, ունենք մի հստակ աբսիդա. այն է, որ դու ապրում ես: Այո՛, կապրես այնքան ժամանակ, քանի դեռ կապրի Քոլատակի միջնակարգ դպրոցը, քանի կապրես քո սաներն ու քո գերդաստանը... Կապրես ու կմնաս մանկավարժ սուրբ ու վեհ անվան հոմանիշը...

Ընկեր Հարությունյան, ես հրաժեշտ չեմ տալիս քեզ, որովհետև դու ինձ համար ապրող կերպար ես... Վերստին շնորհավոր քո իմաստուն տարեդարձը: Մենք հիշում ու խոր վշտով սգուն ենք քո թանկ կուրուստը:

Շարունակի՛ր ապրել մեր հուշերում, զավակներիդ ու թոռներիդ ամենալուսավոր երազներում... Հավատա, դու գերազանց ես կատարել կյանքում քեզ վերապահված դերն ու առաքելությունը:

Սիրով ու երախտագիտությամբ՝ Քոլատակի միջնակարգ դպրոցի զինղեկ Թաթուլ ԵՍԱՅԱՆ

ՆՈՐ ԽԻՆԴ ՈՒ ԲԵՐԿՐԱՆՔ

Որ սեպտեմբերի 1-ը տոն է բոլոր երեխաների, նրանց ծնողների և ուսուցիչների համար, հասկանալի է և այն առումով, որ բոլորն ամհամբերությամբ են սպասում այդ օրվան՝ արտահայտելու իրենց կարոտն ու սերը դասընկերների, ուսուցիչների հանդեպ:

Բայց կա երեխաների մի խումբ, որ առաջին անգամ է ոտք դնում կրթօջախի շենին, բոլորովին այլ շրջապատ է ընկնում և վախվորած է մտնում դասարան: Հենց այս երեխաների համար է շատ կարևոր, թե ինչպես է հնչելու Առաջին զանգը, ով է լինելու իրենց առաջին ուսուցիչը, որն այնքան մեծ տպավորություն է գործելու իրենց կյանքի արշալույսին, ում է նվիրելու սիրով գրկած իր առաջին ծաղկեփունջը:

Այս խոհերն են պարուրում առաջին դասարանցիներին ու նրանց ծնողներին սեպտեմբերի 1-ին:

Իր առաքելության լրջությունը, պատասխանատվությունը, երեխաներին ու ծնողներին մեծ բավականություն պատճառելու պարտավորվածությունն էին այն բոլոր երաշխիքները, որ խնամատի միջնակարգ դպրոցի առաջին դասարանի դասվար Լուսինե Ավանեսյանը մեծ սիրով ու խնամքով էր նախապատրաստվել իր և երեխաների Առաջին զանգին: Դասարանը դարձրել էր իրական հեքիաթի մի փոքրիկ աշխարհ, ուր ոտք դնող չէր կարող չզնայվել ու չտպավորվել: Ամեն ինչ իր ձեռքով ու երևակայության մեծ ուժով էր ստեղծել, հարդարել ու երեխայի անհամբերությամբ սպասել այս օրվան:

Հանդիսավոր տոն է, ցնծում են բոլորը, բոլորից շատ՝ առաջին դասարանցիները, որոնք սահուն հայերենով զարդարում էին այդ տոնը: Ահա փոքրիկ Ռուսլանը հնչեցնում է.

Եկավ 1-ը սեպտեմբերի, Որ գիտության սերմը բերի Մեր ուղեղի պարարտ հերկին, Ուշին ու լուրջ ամեն մեկին:

Իսկ Նարեն գնահատում է գիտելիքը.

Գիտությունը մտքիդ ուժն է, Իմաստության թասն ու կուժն է, Կարդա՛, սերտիր, եղիր ուշիմ, Երթ, ընթացք տուր մտքիդ ուժին: Եվան իր խոսքն առաջին ուսուցչուհուն է ուղղում.



Իմ առաջին ուսուցչուհի, Դու իմ արև, դու իմ լույս, Արևի պես հարազատ Իմ գալիքի արշալույս:

Ու այսպես Անին, Արաքսը, Արթուրը, Կանոն, Գերմանը, Մարիամը, Նարեն, Դավիթը, Ալեքսը, Գեղամը շտապում են առաջին լուրջ տոնը ավելի հետաքրքիր դարձնել:

Ավագ քույր-եղբայրների՝ 12-րդ դասարանի անունից Աննա Ավանեսյանն իր բարեմաղթանքի խոսքն է հղում կրտսեր քույր-եղբայրներին.

«Սիրելի՛ առաջին դասարանցիներ, Արցախի բալիկներ: Այսօր ձեր կյանքի ամենապայծառ տոներից մեկն է: Առաջին անգամ ոտք եք դնում դպրոցի շենին, որը դառնալու է ձեր գիտելիքների կերտման դարբնոցը: Ավագ քույր-եղբոր իրավունքով պատգամում ենք ձեզ՝ սիրել գիրքը, սի-

րապետել ուսուցիչների տված գիտելիքներին, դառնալ մեր փոքրիկ աշխարհի արժանավոր քաղաքացիներ:

Թող արցախյան երկինքը միշտ խաղաղ լինի, և ձեր միակ հոգսը միայն ուսումը դառնա:

Առաջին զանգի տոնի առթիվ շնորհավորում ենք ձեզ, մաղթում լուսավոր ու երջանիկ դպրոցական առօրյա:

Դպրոցական կյանքի այս լուսաշող արշալույսը թող ձեզ համար դառնա մեծ հաջողությունների սկիզբ:

Բարի գալուստ»:

Հետո ծնողների ուղեկցությամբ առաջին դասարանցիները մտնում են իրենց առաջին մեծ հեքիաթի աշխարհը, որտեղ նրանց բազում անակնկալներ էին սպասում:

Դասվարն ամենայն սիրով էր կահավորել դասասեսնյակը: Նստարաններին դասագրքերն էին՝ եռագույն ժապավեններով գեղեցիկ փաթեթավորված, եռագույն փուչիկներ ու շնորհավորական ուղեթղթեր, Առաջին զանգի խորհրդանիշներ: Որ կողմն էլ մայես, աղավճիներ են՝ ճախրելու պատրաստ:

Ու այսպես սկսվում է 14 փոքրիկների առաջին ճանաչողական մեծ դասը, որը դառնալու է նրանց կյանքի ամենաբաղջր հուշը:

Ուրախ ու երջանիկ են բոլորը, քանի որ առաջին դասարան ոտք է դնում մի նոր սերունդ, որը կերտելու է մեր վաղվա օրը:

Ծնողները գոհունակություն ու մեծ բավականություն արտահայտող հայացքներով են միմյանց շնորհավորում ու իրենց երեխաներին վստահում հուսալի ուսուցչուհուն:

Թող Արցախի աշխարհում խաղաղությունը տիրի, և այս փոքրիկներն ուրախ ու երջանիկ անցնեն իրենց նոր կյանքի ճանապարհը:

Բարի՛ երթ, նոր ուսումնական:

Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՍԱԶՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ

Մաթեմատիկայի ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է մարդու՝ շրջակա միջավայրի իմացության անհրաժեշտությամբ և պրակտիկ գործունեությամբ: Հազվիվ թե կասկած հարուցի հետևյալ պնդման իրավացիությունը. մաթեմատիկան պետք է բոլորին՝ անկախ նրանց զբաղմունքից և մասնագիտությունից:

Սակայն տարբեր մարդկանց հարկավոր է տարբեր մաթեմատիկա. վաճառողին՝ միայն պարզ թվային գործողությունների իմացություն, իսկ իսկական բնագետին անպայման պետք են ժամանակակից մաթեմատիկայի խորը գիտելիքներ, քանի որ միայն դրանց հիմքի վրա է հնարավոր բնության օրենքների բացահայտումը և նրա հարմոնիկ զարգացման իմացությունը: Իսկ ընդհանրապես, բոլոր մասնագիտություններն էլ օգտվում են մաթեմատիկայից այն չափով, ինչ չափով չեն կարող առանց նրա: Հատկապես համակարգչային ծրագրավորման, էլեկտրոնային հաշվողական մեթոդների, տեխնիկայի զարգացման և լայն ներդրման շնորհիվ մաթեմատիկան դարձել է «սովորական» զանգվածային կիրառական մասնագիտություն:

Թերևս այդ հանգամանքն ամենից ավելի է կարևորում մաթեմատիկայի համընդհանուր ուսուցման անհրաժեշտությունը և՛ ոչ միայն: Օրինակ՝ լեհ նշանավոր մաթեմատիկոս Շտեյնհաուզի կարծիքով՝ «Մաթեմատիկոսն ամեն ինչ կարող է կատարել ավելի լավ»: Նկատի է առնվում, որ եթե սովորողը նախ ստանա հիմնարար մաթեմատիկական կրթություն, նա ավելի հեշտ կյուրացնի այն ամենը, ինչով կզբաղվի, քան նա, ով չի ստացել այդ հիմնարար կրթությունը: Դժվար է պատկերացնել ժամանակակից ֆիզիկոսին, ճարտարագետին, համակարգչագետին, ծրագրավորողին, տնտեսագետին, երկրաբանին, աշխարհագրագետին, կենսաբանին, քիմիկոսին, տեխնոլոգին, բժշկին, նույնիսկ լեզվաբանին, հոգեբանին ու արվեստագետին՝ առանց մաթեմատիկական մատողության և ճշգրիտ դատողությունների: Օրինակ՝ տարատեսակ ու փոփոխվող արտադրանք ունեցող խոշոր գործարանում աշխատող ճարտարագետից պահանջվում է ոչ միայն հնարամտություն, սրամտություն, հասուն մտածելակերպ, այլև հիմնարար ֆիզիկամաթեմատիկական գիտելիքներ: Նույնն է պահանջվում նաև բժշկից, որը հիվանդության ճշգրիտ պատկերացման և բուժման համար օգտվում է ժամանակակից էլեկտրոնային համակարգով աշխատող բարդ տեխնիկայից, տեխնոլոգիաներից և սարքավորումներից: Եվ ընդհանրապես, ասվածը վերաբերում է բոլոր այն մասնագիտություններին ու բնագավառներին, որոնց ծառայում են մաթեմատիկան ու ֆիզիկան:

Միաժամանակ երբեմն մաթեմատիկայի իմացության են մղում սուբյեկտիվ շարժառիթները: Սենեկան գրել է. «Ալեքսանդր Մալեդոմազին՝ դժբախտը, սկսել է ուսումնասիրել երկրաչափությունը, որպեսզի իմանա, թե ինչքան փոքր է երկիրը, որի անձնան մասը գրավել է ինքը: Նրան են դժբախտ են անվանում այն պատճառով, որ նա պետք է հասկանար իր սխալ լինելը, արդյոք հնարավոր է լինել Մեծ՝ անձնան տարածության վրա»:

Հարց է ծագում. հնարավոր է լինել լուրջ

բնագետ՝ շրջանցելով մաթեմատիկայի իմացությունների խորը իմացությունը: Պատասխանը մի քիչ անսպասելի է. այո, կարելի է: Սակայն դրան պետք է ավելացնել՝ միայն բացառիկ դեպքերում: Չարլզ Դարվինը, ընդհանրացնելով սեփական դիտարկումների և իր ժամանակի կենսաբանության նվաճումների արդյունքները, բացահայտեց օրգանական աշխարհի էվոլյուցիայի հիմնական գործոնները: Ընդ որում, նա արեց այն՝ չհենվելով իր ժամանակի լավ մշակված մաթեմատիկայի վրա, չնայած բարձր էր գնահատում մաթեմատիկան: «Վերջին տարիներին ես խորապես զղջում եմ, որ չկարողացա ծանոթանալ մաթեմատիկայի հետ, զոհեցայից, որ ինչ-որ բան հասկանայի նրա մեծագույն դեկադարվոր սկզբունքներում: Այսպես, մաթեմատիկա յուրացնողները թողնում են այնպիսի մարդկանց տպավորություն, որ կարծես թե մի զգայարանական օրգան ավելի ունեն, քան հասարակ մահկանացուները»: Ո՞վ գիտի, միգուցե մաթեմատիկական զգացողությամբ օժտվածությունը Դարվինին հնարավորություն տար ավելի մեծ ավանդ ունենալու բնության հարմոնիայի ճանաչման գործում:

Հայտնի է, որ դեռևս հնագույն ժամանակներում մաթեմատիկայի տրվում էր մեծ նշանակություն: Առաջին ակադեմիայի (Պլատոնյան ակադեմիայի, մ.թ.ա. 428-348 թթ.) նշանաբանն էր. «Մաթեմատիկա չիմացողները այստեղ չեն մտնում»: Սա վկայությունն է այն բանի, թե ինչքան բարձր էին գնահատում մաթեմատիկան գիտության զարգացման արշալույսին, չնայած այդ ժամանակներում ուսումնասիրության հիմնական առարկան եղել է փիլիսոփայությունը:

«Խա, ով ուզում է լուծել բնական գիտությունների հարցերն առանց մաթեմատիկայի օգնության, դնում է անլուծելի խնդիր: Պետք է չափել այն, ինչ չափելի է, և դարձնել չափելի այն, ինչն այդպիսին չէ», - պնդում էր ակադեմիկոս իտալացի ֆիզիկոս և աստղագետ, բնագիտության հիմնադիրներից մեկը՝ Գալիլեո Գալիլեյը (1564-1642): «Փիլիսոփայությունը տրված է շքեղ գրքում (ես նկատի ունեմ Տիեզերքը), որը մշտապես բաց է մեր աշխարհայացքի համար, բայց հասկանալ այն կարող է միայն նա, ով կարող է հասնել նրա հիմքերին և մեկնաբանել նրա նշանները, ինչով որ գրված է: Այն գրված է մաթեմատիկայի լեզվով և նրա նշանները՝ եռանկյունները, շրջանները և այլ երկրաչափական պատկերներ, առանց որի մարդ չի կարող հասկանալ ոչ մի բան, և առանց դրա նա դատապարտված է թափառելու լաբիրինթոսների մթության մեջ»:

Իսկ ի՞նչ կարծիք են փիլիսոփաներն այս հարցի մասին: Սահմանափակված միայն գերմանացի ակադեմիկոս փիլիսոփա Իմանուիլ Կանտի ասածով (1724-1804): Չարագցնելով Գալիլեյի փիլիսոփայական միտքը «Բնագիտության մետաֆիզիկական սկզբունքները» գրքում՝ նա ասաց. «Բնության վերաբերյալ ամեն մի մասնավոր ուսումնասիրության մեջ կարելի է գտնել գիտություն՝ իսկական իմաստով, միայն այնքան, որքան մաթեմատիկա կա նրանում»:

Բնական-գիտական տեսությունների հիմքը կազմում է մաթեմատիկական նկարագրությունը՝ կուռ տրամաբանական կառուցվածքով:

Ամբողջ աշխարհում, հատկապես զարգացած և զարգացող երկրներում, շարունակաբար պահանջարկ ունեն ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, տեխնոլոգիական, տեղեկատվական և բնագիտական մասնագիտությունները, ինչպես նաև մեծանուն է դրանք ուսումնասիրողների և դրանցով զբաղվողների թիվը: Վիճակագրական որոշ տվյալներով, զարգացած երկրներում՝ ԱՄՆ, Կանադա, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա և այլն, որտեղ երկրի գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրատնտեսական զարգացումներն ապահովող ժամանակակից միկրոէլեկտրոնիկայի, նանոտեխնոլոգիաների, մաթեմատիկական ծրագրավորման, ինֆորմացիոն բարձր տեխնոլոգիաների, կառավարման ավտոմատ համակարգերի, ռոբոտատեխնիկայի պահանջներին համապատասխան՝ ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկատեխնոլոգիական կրթությունը ներառում է հիմնարար ֆիզիկամաթեմատիկական պատրաստվածություն և նրա մակարդակի պահպանում, ինչպես նաև նրանց կիրառական ուղղվածության անընդհատ զարգացում. այդ թիվն աճում է տարեկան միջին հաշվով 10%-ով: Ատոմային էներգետիկան, տիեզերագիտությունը, միկրոէլեկտրոնիկան և նանոտեխնոլոգիաները, մաթեմատիկական մոդելավորման և ծրագրավորման խնդիրները, տեղեկատվական տեխնոլոգիաները, կապը և հեռահաղորդակցությունը, ճարտարագիտությունը, մաթեմատիկական տնտեսագիտությունը, մաթեմատիկական, ֆիզիկական, քիմիան, կենսաբանությունը, բժշկագիտությունը. ահա ժամանակակից մասնագիտական մարտահրավերների ոչ լրիվ ցանկը, որը մղում է երիտասարդներին դեպի աշխատանքի միջազգային շուկա: Չնայած հետխորհրդային երկրների մեծ մասում, այդ թվում նաև մեր երկրում, այդ մասնագիտություններն այնքան էլ պահանջված չեն, և նվազել է հասարակության հետաքրքրությունը նրանց նկատմամբ: Դեռևս քիչ են նրանց առաջադրվող խնդիրները երկրի տնտեսության, արդյունաբերության, գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների կողմից:

Սակայն, անտարակույս, ապագայում տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման հետ միասին դրանք կավելանան և նոր մարտահրավերներ կնետեն կրթության համակարգին: Դա անընդհատ գործընթաց է աշխարհում և մեր երկրում, որին պետք է նախապատրաստվենք՝ ապագայում ընդունելու այդ մարտահրավերները բոլոր մակարդակներում՝ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Թեպետ մաթեմատիկան և ֆիզիկան զարգանում են իրենց սեփական տրամաբանությամբ և մեթոդաբանությամբ ու, կարծես, ուղակիորեն գործնական խնդիրներ չեն լուծում, սակայն կիրառական գիտությունների զարգացման վրա նրանց ազդեցությունները չի կարելի թերագնահատել: Մաթեմատիկոսները, ֆիզիկոսները սահմանում են հասկացություններ, մեթոդներ, թերեմներ, օրինաչափություններ, չափանիշներ, որոնք մաթեմատիկոսները գործունեության արդյունք են, և թվում է, թե դրանք անմիջականորեն կապված չեն շրջապատող նյութական իրականության

հետ ու տվյալ պահին չունեն կիրառություններ, սակայն, ինչպես ցույց է տալիս գիտության պատմությունը, նրանք երբևէ գտնում են իրենց կիրառությունը:

Ժամանակակից գիտական հետազոտությունների համար բնութագրական է ճշգրիտ մաթեմատիկական մեթոդների կիրառումը, բացի ավանդական բնագիտության՝ ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, ճարտարագիտության, տեխնիկայի բնագավառներից, որոնք իրենց հերթին ապահովում են մաթեմատիկայի զարգացումը, վերջին տասնամյակներում նաև տնտեսագիտության, լեզվաբանության, մշակութաբանության, հոգեբանության, բժշկագիտության, գիտության ու արվեստի այլ բնագավառներում:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և նրանց կիրառական գիտությունների զարգացումները, որոնք կարող են ապահովել երկրի գիտատեխնիկական, տեխնոլոգիական առաջընթացն ու քաղաքակրթության ձգտումները, անխուսափելիորեն պահանջում են առաջնահերթ և մատչելի դարձնել համապատասխան մասնագիտությունների նպատակային բարձրորակ ուսուցումը կրթության բոլոր մակարդակներում պետական հովանավորության ու հոգածության ներքո:

Վերջում բերենք մաթեմատիկայի մասին նշանավոր մարդկանց մտքերը.

- Հույտ սիրելով համրողական արվեստը՝ խորհեցի, թե առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում. մայր համարեցի այն բոլոր ուսմանց:

Անանիա Շիրակացի

- Մաթեմատիկան, որպես բնագիտության ու աստղագիտության հետ հաղորդակցվող գիտություն, գտնվում է այս երկուսի մեջտեղում, որովհետև բնագիտության նման նյութական է և աստվածաբանության նման ոչ նյութական:

Դավիթ Անհաղթ

- Չիք արքայական ճանապարհ դեպ երկրաչափություն:

Էվկլիդես

- Յուրաքանչյուր բնական գիտության մեջ այնքան ճշմարտություն կա, որքան նրանում մաթեմատիկա կա:

Էմանուիլ Կանտ

- Բնությունը մեզ հետ խոսում է մաթեմատիկայի լեզվով:

Ֆրիդրիխ Էնգելս

- Մաթեմատիկան տիեզերական լեզու է:

Պլատոն

- Աստված ղեկավարվում է երկրաչափությամբ:

Պլատոն

- Ով մաթեմատիկոս չէ, թող չկարդա իմ գործերը:

Լեոնարդո դա Վինչի

- Անհնար է հզոր պետականություն՝ առանց հզոր մաթեմատիկայի:

Նապոլեոն Բոնապարտ

- Բնությունը խոսում է մեզ հետ մաթեմատիկայի լեզվով:

Գալիլեո Գալիլեյ

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ Ֆիզմաթ. գիտ. դոկտ., պրոֆ.

ՄԵՐ ԼԵՉՈՒՆ ՄԵՐ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Վերջերս հեռուստատեսությամբ լսում էի Արցախի բարբառագետներին և տեսնում, թե ինչպես են նրանք ձգտում պահպանել մեր բարբառը: Գիտությունների թեկնածու կրթությամբ ասում էր արցախյան բարբառը, նույնիսկ պահանջում թոթովախոս մանուկներին սովորեցնել նախ խոսել բարբառով, հետո կնեծանան, կսովորեն նաև գրական լեզուն: Չարմանալի է. մի՞թե ճիշտ է երեխային սովորեցնել *ճուր* և ոչ թե *ջուր*, *ճոտ* և ոչ թե *ճուտ*, *տոն* և ոչ թե *տուն* և այլն:

Գյուլը գնացած հեռուստալրագրողը ձգնում է ամպայման խոսել բարբառով և նույնիսկ ասում է. «Գյուլը մի սուբուր արհեստավորներ է ունեցել, իսկ այժմ չունի ոչ մեկը»: Մի՞թե աղջիկը չգիտի, որ մարդկանց «սուբուր» չեն ասում, նույնիսկ գյուղում դա ասվում է ոչխարների և այծերի հոտի մասին: Դա նշանակում է մեր բարբառը արհեստականորեն զոհեցնել:

Ծնվել ու ապրել եմ Ստեփանակերտում: Դեռ մանկապարտեզի մեր դաստիարակչուհի Սոնյա Բաբուրյանը մեզ հետ խոսում էր գրական լեզվով, սովորեցնում երգեր: Դրանցից մեկի մեղեդին մինչև հիմա իմ ականջում է. «Արևն ելավ, հազավ գրահ...»: 1946-ին նա շարքով մեզ բերեց հ.1 դպրոց, որտեղ մեզ դիմավորեց վաստակավոր ուսուցչուհի Արուսյակ Մախ-

մուրյանը: Հաջորդ դասարաններում մեր հայոց լեզվի ուսուցիչներն էին Ելենա Սիխայիլիդիսը, Քնարիկ Բադյանը, Արամ Մարտիրոսյանը: Ա.Մարտիրոսյանը պահանջում էր անպայման կարող ծրագրով նախատեսված և արտադասարանական ընթերցանության ցանկում եղած ողջ գրականությունը: Նա պահանջում էր ինքնուրույն շարադրել կարդացած գրքերի բովանդակությունը և կերպարները: Գնահատում էր արդարևոր: Հարգում ու սիրում էի աշխարհագրության ուսուցչուհի Սարգարիտ Կապուտիկյանին, պատմության ուսուցիչներ Հայկուշ Պետրոսյանին, Սաթիկ Սողոմոնյանին, Փնջիկ Հակոբյանին, Ահարոն Բալայանին, Սերգեյ Յարամիշյանին, մաթեմատիկայի ուսուցչուհի Պայծառ Դովաթյանին: Ամբողջ տասը տարվա ընթացքում չեմ հիշում դպրոցի ոչ մի ուսուցչի, որ աշակերտների հետ խոսեր բարբառով: Ուսուցիչներն անխտիր ոչ միայն իրենք էին խոսում գրական լեզվով, այլև աշակերտներին էին սովորեցնում խոսել գրական հայերեն:

Երևանի պետական համալսարանում ուսանելիս սիրով էի լսում մեր հրաշալի դասախոսներին՝ Հարենցի, Ութագյանին (Հրաչուհի Ութագյանի ամուսինը), Հ.Պարսամյանին, ակադեմիկոս Դաֆարյանին, Վահան Ռշտունուն (հայ խո-

վետական պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների վաստակավոր գործիչ, բազմաթիվ պատմական աշխատությունների հեղինակ, պետական բարձր պարգևների արժանացած դասախոս): Վահան Ռշտունին մեզ դասավանդել է ՍՍՀՄ պատմություն:

Մեր բոլոր ուսանողների սիրելին էր նաև Ստեփան Ներսիսյանը՝ հայ խորհրդային պատմաբան, մանկավարժ, ՀՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ, Երևանի համալսարանի իր աշխարհի պատմության ամբիոնի վարիչ: Դասավանդել է Հին Հունաստանի, Հին Հռոմի, միջին դարերի Ռուսաստանի պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն: Ստեփան Ներսիսյանը ներկա էր իմ դիպլոմային աշխատանքի պաշտպանությանը: Իմ ղեկավար Գարիկ Հարությունյանը արաբական և աֆրիկյան երկրներից եկած ուսանողների կուրսերի կապակցությամբ բացակայում էր Երևանից, և ես աշխատանքս գրել էի ինքնուրույն: Ամբիոնի վարիչ Բադյանը պահանջեց աշխատանքս ներկայացնել պաշտպանության: Ընկեր Բադյանն իմ ընդդիմախոսն էր: Պաշտպանության ժամանակ նրա արած դիտողությունների մի մասին ես համաձայն չէի:

ՀԱՅՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏՈՒՆԻ ԵՐԶԱՆՈՒՄ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2017-2018 ուսումնական տարում շրջանում գործել են պետական հովանավորությամբ 9 և ոչ պետական մեկ մանկապարտեզներ՝ 29+1 խմբերով և 702 երեխայի ընդգրկմամբ, դպրոցներից կից թաղավարդի, հնուշինական, Քերթի նախադպրոցական խմբերը՝ 32 երեխաներով: Նախադպրոցական հիմնարկների ուսումնանյութական հենքի հարստացման ուղղությամբ լուրջ աշխատանքներ է տանում ԱՅ կառավարությունը: Ուսումնական տարում նոր գույք են ձեռք բերել Մարտունու հ.1, Սոսի, ճարտարի հ.2, Գիշու և Աշանի մանկապարտեզները:

2017-2018 ուսումնական տարում շրջանի գրեթե բոլոր մանկապարտեզներում կազմակերպվել են ընդօրինակման պարապմունքներ և փոխադարձ դասալսույուններ, որոնց մասնակցել են ավելի քան 100 դաստիարակներ և տնօրեններ: Նման միջոցառումներն առավել արդյունավետ են դարձնում նախադպրոցական հիմնարկների կրթադաստիարակչական աշխատանքները:

Բաժինը այցելություններ է կազմակերպել շրջանի բոլոր մանկապարտեզներ, որոնց արդյունքում ստուգվել են նախադպրոցական ուսումնական հաստատության գործածության ենթակա փաստաթղթերը, մանկապարտեզների սանիտարահիգիենիկ վիճակը, ճաշացուցակների ճիշտ իրագործումը, սննդի որակի և կալորիականության ապահովումը, ինչպես նաև տարբեր մանկապարտեզներում մասնակցել ենք դաս-պարապմունքներին, աշնան հանդեսներին, «Ցտեսություն, մանկապարտեզ» և մի շարք այլ միջոցառումների: Այցելություններից հետո տրվել են համապատասխան հանձնարարականներ, և վերահսկվել է դրանց կատարման ընթացքը:

2018-2019 ուսումնական տարում հանրակրթական դպրոցների առաջին դասարան են հաճախել մանկապարտեզների թողարկած 221 երեխաներ:

Հանրակրթության իրականացման հիմնական օղակը եղել է մնում է հանրակրթական դպրոցը:

2017-2018 ուսումնական տարում շրջանում գործել են 36 հանրակրթական դպրոցներ՝ իրենց 7 մասնաճյուղերով, որից 24 միջնակարգ (2-ը՝ հոսքային), 12 հիմնական դպրոցներ 361,5 դասարան համակազմով և 3615 սովորողով: Դասարան կոմպլեկտների միջին խտությունը կազմել է 10 աշակերտ: Դպրոցներում ունենք շուրջ 1241 աշխատող: Ուսուցումը դպրոցներում աշխատել է 862 ուսուցիչ՝ 0,5 դրույք (11ր/ժ) միջին ծանրաբեռնվածությամբ: Աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը 4:1 է:

Սովորողների թիվը՝ ուսումնական տարվա սկզբում 3615, վերջում՝ 3610: Շրջանից դուրս տեղափոխվածների քանակը՝ 42, ընդունվածների քանակը՝ 37: Փոխադրվել է հաջորդ դասարան 3397 աշակերտ: 109 աշակերտ ավարտել է 9-րդ դասարանը՝ ստանալով վկայական, որից 37 սովորող՝ վերաբնույթյան արդյունքներով, իսկ 163 աշակերտ ավարտել է 12-րդ դասարանը՝ ստանալով ատեստատ: 2017-2018 ուսումնական տարում 1-ին դասարան է հաճախել 321 աշակերտ (2018-2019 ուսումնական տարում՝ 317):

Հանրակրթական ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որն ուղղված է հայ տեսակի շարունակության և ապահովմանը: Այս առումով հանրապետությունում իրականացվեց անցումը 12-ամյա կրթության, որի ապահովման ուղղությամբ իրականացվում է առարկայական նոր չափորոշիչների համապատասխան ծրագրերի ու դասագրքերի ներդրում, որոնք, սակայն, միշտ չէ, որ լիարժեք են լինում ու ընդունվում մասնագետների կողմից: Այս գործընթացում առավել կարևոր հիմնախնդիր է ուսման որակի և արդյունավետության բարձրացումը, որն ավելի բարդ է տևական աշխատանք է, ինչին նպատակաուղղված է կրթության կառավարման մարմինների և համակարգի մանկավարժական կոլեկտիվների գործունեությունը: Շատ աշակերտներ, օգտվելով իրենց իրավունքից, շարունակում են ուսումը ավագ դասարաններում, սակայն առանց սովորելու նպատակի: Այս իրավիճակը շտկելու համար ՀՀ կրթության և գիտության նախարար Արայի Հարությունյանը օգուտնայան խորհրդակցությունների մեկնարկի ժամանակ հայտարարել է, որ ավարտական դասարանների աշակերտներն ամենայն հավանականությամբ դպրոցն ավարտելու համար կհանձնեն միասնական քննություններ բոլոր առարկաներից, որը կլինի արդյունքի միասնական ամփոփում՝ ստանալու կրթության արդյունքի իրական պատկերը, և արդյունքների համար պատասխանատու կլինի տվյալ դպրոցի տնօրենը:

Շրջանի մի շարք կրթօջախներ՝ Գիշու, հնուշինական միջնակարգ դպրոցները ԿԳՍ նախարարության պետտեսչության կողմից ենթարկվել են համակողմանի ստուգման, իսկ Վազգենաշենի միջնակարգ և ճարտարի հ.3 հիմնական դպրոցներում պետտեսչության կողմից իրականացվել են թեմատիկ ստուգումներ, որոնց արդյունքում համապատասխան տեղեկանքների հիման վրա վարչակազմի ղեկավարի հանձնարարությամբ կազմվել են թերությունների վերացման պլան-ժամանակացույցներ: Պետտեսչության ստուգումների ժամանակ պարբերաբար ի հայտ են գալիս այնպիսի թերություններ, ինչպես՝ չկապակցված լաբորատորիաների և կաբինետների վարձատրությունը: Ուսումնական տարվա սկզբին բաժնի կողմից իրականացվելու են այցելություններ հանրակրթական դպրոցներ՝ նման երևույթներից զերծ մնալու համար:

Դպրոցները մասնագետներով համալրելու լուրջ խթան է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կազմակերպումը: Այդ կապակցությամբ բաժնի կողմից վերահսկվում են մանկավարժական կադրերի ընտրության և նշանակման գործում շրջանի մի շարք հանրակրթական դպրոցներում կայացած թափուր աշխատանքի իրականացումը: Չնայած մրցույթի կարգի մեջ կատարված որոշակի փոփոխությանը, պետք է նշել, որ այն մնացել է ոչ կատարյալ: Բայց անհրաժեշտ են համարում նշել, որ ԱՀ ԿԳՍ նախարարությունում համապատասխան աշխատանքներ են իրականացվում՝ առավել արդյունավետ դարձնելու գործընթացը:

Բաժինը կազմակերպել է վերահսկել է ուսուցչի և դաստիարակի թափուր տեղերի համար մրցույթները հետևյալ կրթօջախներում՝ Մարտունու հ.1, Գիշու, Թաղավարդի, Կոլտգաշենի, Մաճկալաշենի, Սոսի միջնակարգ, Թաղավարդ-Կալերի հիմնական դպրոցներում, ինչպես նաև Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան հ.2 և Կարմիր Շուկայի մանկապարտեզներում:

Շրջանի 19 դպրոցներում 2017-2018 ուսումնական տարում ընդգրկված է եղել ներառական կրթության 73 աշակերտ, որից տնային ուսուցմամբ՝ 19: Անցած ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 8 աշակերտ ավարտել է 9-րդ դասարանը, որոնք, ըստ օրենքի ազատվել են քննություններից և ստացել կրթության վկայական:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման նպատակով բաժնի կրթության գծով գլխավոր մասնագետ Ս. Եսայանի և սպորտի գծով գլխավոր մասնագետ Ն. Աղաջանյանի հետ այցելել ենք ճարտարի հ.5, Թաղավարդի, ճարտարի հ.1, Սոսի, Շեխերի, Կաղարծու, Ննգու, Հերիերի, Աշանի, Գիշու, Սպիտակաշենի միջնակարգ և Թաղավարդ Կալերի, Ծովատեղի, ճարտարի հ.3, ճարտարի հ.4 հիմնական դպրոցներ, կազմակերպել քննարկումներ մեթոդիկականների, դասղեկների ու վարչական աշխատողների հետ, տվել համապատասխան ցուցումներ և մեթոդական օգնություններ:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդրողական փուլին մասնակցել է 684 աշակերտ, շրջանային փուլին՝ 559 աշակերտ՝ 31 դպրոցներից, որը կազմում է ընդհանուր սովորողների 15,5%-ը: Շրջանային փուլի արդյունքներով 58 աշակերտ և 32 ուսուցիչ պարգևատրվել են կրթության և սպորտի բաժնի դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով, իսկ 55 սովորող վաստակել է հանրապետական փուլի մասնակցության հայտ, նրանցից 11-ն արժանացել ԿԳՍՆ դիպլոմների, գովազդամատերի և դրամական պարգևի: ՀՀ երաժիշտի փուլին ունեցել ենք 11 մասնակից՝ նախորդ տարվա 9-ի դիմաց: Նրանցից 2-ը պարգևատրվել է 1-ին, 1-ը՝ 2-րդ, 2 աշակերտ՝ 3-րդ կարգի դիպլոմներով, իսկ 2 աշակերտ արժանացել է գովազդամատերի: Շրջվարչակազմի նախաձեռնությամբ կրթության բաժինը կազմակերպել է հանդիսավոր միջոցառում, որի ժամանակ բարձրակարգ տեղեր զբաղեցրած աշակերտները և նրանց ուսուցիչները արժանացել են թանկարժեք նվերների և գովասանքի խոսքերի: ՀՀ երաժիշտի փուլում բարձր արդյունքներ ապահոված աշակերտներին ու նրանց ուսուցիչներին թանկարժեք նվերներով ու գումարով պարգևատրել է ԱՀ Նախագահը:

Արջայան շարժման 30-ամյակի և Մայիսյան եռատոնի առթիվ շրջանի հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների միջև կազմակերպվել է ստեղծագործական շարժարությունների մրցույթ և լավագույն 6 աշակերտ մասնակցել է հանրապետական փուլին, որտեղ ճարտարի հ.2 հիմնական և Մարտունու հ.1 միջնակարգ (հոսքային) դպրոցների աշակերտները համապատասխանաբար զբաղեցրել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերը:

ը, ստացել արժեքավոր նվերներ և դրամական պարգևներ:

Մայիսյան եռատոնի շրջանակներում շրջանի հանրակրթական դպրոցների ստեղծագործող աշակերտների միջև անց է կացվել մրցույթ, և լավագույն 4 ստեղծագործողները մասնակցել են հանրապետական փուլին: Արդյունքում 2 աշակերտ Հերիերի և Աշանի միջնակարգ դպրոցներից գրավել են մրցանակային տեղեր:

Մայիսյան եռատոնի շրջանակներում շրջվարչակազմի կողմից կազմակերպվել է շարժարությունների մրցույթ, և մրցանակային տեղեր զբաղեցրած Մարտունու հ.1, Կաղարծու և Թաղավարդի միջնակարգ դպրոցների աշակերտները ստացել են դրամական պարգևներ:

Շրջանային և հանրապետական մակարդակով անց են կացվել տարաբնույթ սպորտային միջոցառումներ: Ի տարբերություն նախորդ տարիների, այս ուսումնականում բավականաչափ մարզագույթ է տրամադրվել շրջանի 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցներին: Սակայն անհրաժեշտ է, որ սպորտույթի տրամադրման գործընթաց իրականացվի բոլոր դպրոցներում:

Բաժնի ուշադրության կենտրոնում է սովորողների ֆիզիկական և ռազմաօդային սպորտի հաստիարակությունը: Այդ ուղղությամբ բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները. ուսուցչի օրվան նվիրված կազմակերպել ենք թեթև աթլետիկայի շրջանային մրցույթ, սպորտի մասսայականացման շրջանակներում՝ մինի ֆուտբոլի առաջնություն, Մոնթե Մելքոնյանի ծննդյան օրվան նվիրված՝ վոլեյբոլի տղամարդկանց շրջանային և հանրապետական առաջնություն: Շրջանի հավաքական թիմերը մասնակցել են հանրապետությունում կազմակերպված բոլոր մարզական միջոցառումներին, արձանագրել բարձր ցուցանիշներ:

Դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման գործում կարևոր ներդրում ունի Մարտունու ՄՊՍԿ-ն Այս ուսումնականում նշված կենտրոնում գործել է 14 անուն 35 խումբ՝ 375 աշակերտ ընդգրկմամբ:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Ասկերանի շրջանի Այգեստան գյուղում կազմակերպվել է «Ասպետ» ռազմամարզական ճամբար, որին մասնակցել են շրջանի միջնակարգ դպրոցների 10-րդ դասարան ավարտած 111 տղա: Ճամբարի հրամանատարության կողմից պատվոգրերի են արժանացել եմիջճանի հ/դ զինվոր ու մի խումբ աշակերտներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Նորշենի միջնակարգ դպրոցում բացված «Արմաթ» լաբորատորիա կարճ ժամանակում բարձր արդյունքներ ապահովեց, և Նորշենի միջնակարգ դպրոցի աշակերտները, մասնակցելով Արցախում և ՀՀ-ում կազմակերպված մրցույթներին, գրավեցին մրցանակային տեղեր: Դպրոցում երեխայի ուսման գործում բոլոր հնարավորությունների ստեղծումը ներառում է նաև մանկավարժական լավ կադրերի պատրաստումը: Այս գործընթացում մեծ խթան պիտի հանդիսանա ուսուցիչների ատեստավորումը, որը վերջին տարիներին կազմակերպվում է պարբերաբար: Տարվել են նախապատրաստական աշխատանքներ, ձևավորվել ատեստավորման տարածքային հանձնաժողովներ: Ատեստավորման շրջանային հանձնաժողովի կողմից քննարկվել է 168 ուսուցչի գործ:

Ներկայացնելով դպրոցականների ամառային հանգստի թեման՝ նշենք, որ ամառային արձակուրդների ընթացքում 38 աշակերտ իրենց հանգիստն են անցկացրել ՀՀ Հանքավանի «Հասնիկ», 6-ը՝ Վանաձորի «Թեթ լեռ», 10-ը Լոռու մարզում, 150-ը՝ ՀՀ-ի կողմից կազմակերպված Մարտունու հ.1 դպրոցի, 5-ը՝ Պատարայում կազմակերպված ճամբարներում, 3 աշակերտ՝ Հունաստանի Անո-Սիրոս կղզում:

Կրթությունը կարևոր գործիչ է պետության ձեռքին՝ իրականացնելու իր հիմնական նպատակները, իսկ պետության հիմնական նպատակը ժողովրդի անվտանգության ու մրցունակության ապահովումն է: Մենք պետք է հասկանաք, թե ինչպիսի քաղաքացի ենք ուզում ունենալ վարչակ Արցախում՝ եվրոպական ժամանակակից քաղաքակրթական ամենաբարձր արժեքներին հավատարիմ, բայց ելույթներ իր հողին ու ջրին նվիրված քաղաքացի: Հետևաբար, կրթական համակարգի առաջ դրվում է հիմնական մի խնդիր՝ պետք է լինենք, կամ սպասարկող երկիր կամ արժեք արտադրող: Այսօր կրթական համակարգի լրջագույն խնդիրը կառավարման որակի բարձրացումն է, ինչը մեծապես կախված է դպրոցների տնօրենների կառավարման հնտություններից եւ օրինականության սահմաններում գործելու պարտավորություններից:

Այսօրվա կարևորագույն խնդիրներից է նաև այն, որ կարողանանք արժատապես փոխել վերաբերմունքը կրթական համակարգի նվիրյալ-

ների հանդեպ: Վստահաբար մեր երկրի ամենակազմակերպված և գիտակից հատվածը շարունակում է մնալ ուսուցչական համակազմը: Տասնյակ հազարավոր ուսուցիչներ ՀՀ-ում և Արցախում այսօր կատարում են իրենց պարտականությունները՝ մի մասն ամբողջական նվիրումով, մի մասը՝ դժգոհությամբ, բայց գործի կարևորության գիտակցումով, իսկ մյուս մասը կրթության բնագավառը դիտում է պարզապես որպես աշխատատեղ: Ուսուցիչ ասելով՝ նկատի ունեն բոլոր այն մարդկանց, ովքեր իրենց ուսերին են վերցրել սերունդ դաստիարակելու պատասխանատվությունն ու ծանրությունը: Ավելին՝ մինչև չկարողանանք ուղիղ և հասցեական դիտարկել այս հիմնախնդիրը և գտնել համապատասխան լուծումներ, որոնք կօգնեն բարձրացնել ուսուցչի դերակատարությունը հասարակության մեջ, մեր բոլոր ծրագրերը մեծ վտանգի տակ կլինեն:

Նրանք են առաջալները կրթության ոլորտում, ովքեր կարողանում են անկախ առկա խնդիրներից ու հոգանքից լույս սփռել դեպի գիտելիքը, դեպի հավատ և իրական արժեքներ: Նրանք են նաև ժամանակի պահանջ դարձած կրթական բարեփոխումների հիմնական աջակիցը, իրականացնողն ու հաջողության իրական պատասխանատուն:

Հայ մարդը դարեր շարունակ ակնածանքով և մեծարանքով է գնահատել մանկավարժի գործը՝ նրան վերապահելով նոր սերնդի կրթության և քաղաքացու ձևավորման դժվարին աշխատանքը:

Այսօր մեր պետության հզորացման ու ազգային իղծերի իրականացման գործում մենք կրկին ու կրկին ապավինում ենք ձեզ, սիրելի ուսուցիչներ: Ձեր գիտելիքն ու վարպետությունը, ստեղծագործական ունակությունն ու կենսափորձը, ինչպես նաև հոգատարությունն ու ներողամտությունը խիստ անհրաժեշտ են նոր մարտահրավերներին դիմադրելու, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու արդյունավետությունն ապահովելու համար:

Առանձնակի շնորհակալություն են հայտնում վաստակած հանգստի անցած մեր ավագ սերնդի մանկավարժներին, ովքեր շարունակում են խորհուրդներով և բազմամյա փորձով իրենց նպաստը բերել մեր ընդհանուր գործին:

ԱՌԱՋԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական քաղաքականության իրականացման շրջանակներում կան շտկման ենթակա որոշ տարրեր: Դրանք են՝ անբավարար ուշադրությունը բնագիտական առարկաների նկատմամբ, ինչի հետևանքով վերջին տարիներին պետական համալսարանում չեն ձևավորվում քիմիայի և ֆիզիկայի բաժիններ: Հարկ է 1-2-ական ժամ ավելացնել քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և ինֆորմատիկա առարկաներին:

Հաշվետու տարում չի իրականացվել «Լավագույններ»-ի մրցույթ, ու եթե արդեն այն այլևս չի կազմակերպվելու, պետք է խնդիր դնել հայտնաբերել և խրախուսել այն ուսուցիչներին, ովքեր կարողանում են իրենց ակտիվությամբ մթնոլորտ փոխել՝ ապահովելով բարձր որակ և առաջադիմություն:

Ծրագրերը մնում են բարդ ու դժվար յուրացվող, հաճախ են փոխվում, առաջին կիսամյակում դասագրքերում եղած վրիպումների մասին տեղեկությունները տրվում են կիսամյակի վերջում և այլև: Հարկ է, որ դասագրքերը կազմելուց հետո դրանք ենթարկվեն ստուգման ու նոր միայն առաքվեն դպրոցներ: Օրինակ՝ տարբեր դասարանների դասագրքերում նույն փաստն արձանագրված է տարբեր տարեթվերով:

Որոշ դպրոցներում դասացուցակները կազմվում են այնպես, որ ուսուցիչները ունենան ազատ օր: Նման դասացուցակ կազմող փոխտնօրենները փորձում են համակարգը հարմարեցնել իրենց անձնական շահերին, որն անընդունելի է, այդ կերպ աշխատողների ծանայություններից անհրաժեշտ է հրաժարվել՝ բացառելու մասնատիպ երևույթները:

Անհասկանալի և անտրամաբանական է հոսքային դպրոցների բնագիտական հոսքում հունանիտար առարկաներ դասավանդող և հունանիտար հոսքում բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների վարձատրությունը, այն դարձնել քննարկման նյութ:

Արդարացի չէ նաև, երբ հոսքային ու միջնակարգ դպրոցների աշակերտները պետական ավարտական կամ միասնական քննությունների ժամանակ կատարում են նույն առաջադրանքները, որը բացարձակ անհավասար պայմաններ է ստեղծում վերոնշյալ կարգավիճակի դպրոցների աշակերտների միջև:



ԳՆԱՐԱՏԱՆՔ

ՄԱՆԿԱՎԱՐԺ - ԳԻՏՆԱԿԱՆԻ ԾԱՂԿԱՐԴՈՒՅՐ ՎԱՍՏԱԿԸ



Սովորաբար կամանց հոբելյանական միջոցառումների ժամանակ խորհուրդ է տրվում չընդգծել նրանց տարիքը: Ժողովուրդն իմաստուն է: Նրա կենսափոխակապությունն է թելադրում, որ կանայք չեն ծերանում, քանի որ առանց նրանց ոչ օջախն է օջախ, ոչ կյանքն է կյանք, ոչ էլ ծաղիկն է ծաղիկ: Պատահական չէ, որ հոր անունով կնքված «հայրենիք» սրբաբառն անգամ քաղցրացվել է մոր անունով՝ մայր հայրենիք, իսկ ժողովրդի դիմագիծը հավերժացնող լեզուն՝ մայր լեզու, մայրենի լեզու:

Սակայն կյանքն ունի նաև իր պարտադրող պահանջները: Միևնույն է, ընթերցողը պետք է իմանա հոբելյարի և՛ տարիքը, և՛ գործունեության սահմանները:

Մեր այս մտորումների առիթը հայ ժողովրդի խելքը ու գործունյա, եռանդուն ու համեստ, Արցախ աշխարհի կրթամշակութային ասպարեզում իր նկատելի ծաղկեփունջն ստեղծած, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Էլլադա Բաղդասարյանն է, որն իր կենսագրության մատյանին է հանձնում անցած 60 տարիները՝ կյանքի շարունակվող մատյանն արարման նոր տասնամյակներով հարստացնելու վճռականությամբ:

Տեղին է հնչեցված, որ մարդու տարիքը գնահատվում է ոչ թե տարիների գունարով, այլ նրա մատուցած ծառայությունների ժողովրդանվեր էջերով: Ծանոթանում են Էլլադա Ջավենիի անցած ուղու խաչմերուկներին, նրա արած-դրածին ու գոհունակությամբ շշմոջում՝ «Ապրես, Էլլադա», դու մեր ժողովրդի այն դուստրերից ես, որով կարող եմ հպարտանալ և՛ ծնողները, և՛ ժողովուրդը»:

Էլլադան ծնվել է 1958թ. սեպտեմբերի 7-ին, Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը 1975-ին: Բարձրագույն կրթություն ստացել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ 1983-ին՝ ստանալով հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Հիրավի, Էլլադան ծնվել է հենց մանկավարժի աստվածաշնորհի պատգամով: Նա աշխատանքային հարուստ փորձ ունի: Այսպես, 1975-1983թթ. Ստեփանակերտի պիոներների և դպրոցականների տանն աշխատել է որպես խմբակավար, 1982-1983թթ. նույն դպրոցում՝ որպես տարրական դասարանների դաստիարակ, 1983-1985թթ.՝ ինստիտուտի փորձուսուցման բաժնի վարիչ, 1991-1996թթ.՝ նույն կրթօջախի հոգեբանության ամբիոնի դասախոս: Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել մի ճշմարտություն, այն, որ մանկավարժը գիտության ասպարեզ է մտնում որպես նվիրյալ գործիչ, իր կյանքի իմաստը տեսնում գիտամշակութային ասպարեզի դժվարին, բայց հաճելի մաքառումների մեջ: Էլլադան նման գործիչներից է, երբեք չի բավարարվել ձեռք բերածով, միշտ որոնել է՝ գտնելու նպատակով ու գտել է իր որոնածը՝ քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

Մեր աչքերի առջև ու մեր թևավորող խորհրդով էր, որ Էլլադան 1988թ. դարձավ Երևանի պետական համալսարանի մանկավարժության մասնագիտության հայցորդ ու 1994թ. Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պաշտպանեց ատենախոսություն՝ ստանալով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, գործունեությունը շարունակեց հարազատ բուհի մանկավարժության և հոգեբանության ամբիոնում՝ 2006-ին ԶԳ ԲՈՂ-ի կողմից ստանալով դոցենտի գիտական կոչում:

Բարձրագույն ուսումնական հաստատության մանկավարժից պահանջվում է նաև գիտական աշխատանք, որովհետև բուհն իր գործունեությունը ծավալում է երկու համահավասար ուղղություններով՝ մանկավարժության և գիտության: Ծանոթանում են Էլլադայի գիտական գործունեությանը ու հանդգնում, որ նրա ընտրած ճանապարհն իսկ և իսկ մանկավարժ-գիտնականի արդյունավետ ուղի է՝ առնչված ոչ միայն կրթամշակութային հարուստ

անցյալին, այլև արդի գիտատեխնիկական առաջընթացին, ուսուցման 21-րդ դարի ամենօրյա փոփոխվող մեթոդներին: Չի եղել գիտամանկավարժական համահամալսարանական կամ միջազգային մի գիտաժողով, որտեղ չի նշել Էլլադայի խոսքը: Նա հանդես է եկել հետաքրքիր գեկուցումներով: Հայտնի են նրա ելույթները դեռահասների դաստիարակության առանձնահատկությունների մասին, առանձնապես պատերազմական ու հետպատերազմյան շրջանում աճող սերնդի համակողմանի ներդաշնակ զարգացման արդի հիմնախնդիրների վերաբերյալ, հայեցի դաստիարակության և կրթության գործում ժողովրդական մանկավարժության, սովորողների հայեցի դաստիարակության իրականացման գործընթացում արցախահայ բանախյուսության դերի կապակցությամբ, ինչպես նաև հայոց Շուշի քաղաքի կրթօջախների պատմական դերի ու տեղի մասին:

Լայն արձագանք են գտել Էլլադայի «Ազգային կրթության և դաստիարակության դերի գնահատումը Արցախյան բանախյուսության մեջ», «Սովորողների հայեցի դաստիարակության հիմնահարցը Արցախի հայագիր դպրոցների պատմության էջերում», «Բուհում արտաուսումնական աշխատանքների կազմակերպումը որպես ուսանողական կոլեկտիվի ձևավորման գործոն», «Հայրենասիրության գաղափարն արցախահայ բանախյուսության մեջ», «Արցախյան մանրապատման արվեստը», «Ուսանողների ինքնուրույն աշխատանքի որակի բարձրացման հիմնախնդիրները» և այլ գեկուցումներ, որոնք գետնովել են տարբեր բուհերի գիտական տեղեկագրերի էջերում:

1991 թվականից սկսած Էլլադայի տպագրված գիտական աշխատանքների թիվը հասնում է 50-ի:

Է. Բաղդասարյանը նաև ուսումնամեթոդական ձեռնարկների ճանաչված հեղինակ է: Եվ դասախոսները, և՛ ուսանողները գոհունակությամբ են օգտվում նրա «Մանկավարժական դասընթացի գործնական պարապմունքների, ստուգողական դասընթացային աշխատանքների թեմատիկան և համապատասխան դասախոսություններ», «Տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական համակարգված աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու որակի բարձրացման ուղիները» մեթոդական ձեռնարկներից:

Վերջերս համապատասխան գնահատականի են արժանացել «Արցախի ժողովրդական հեքիաթների ճանաչողական ու դաստիարակչական արժեքը», «Համամարդկային արժեքներն արցախյան ժողովրդական բանախյուսության մեջ», «Ներընտանեկան հարաբերությունների արժևորումն արցախյան ժողովրդական բանախյուսության մեջ» գիտական աշխատանքները, որոնք գետնովել են գիտաժողովների նյութերի ժողովածուներում:

Մի քանի տարի է, ինչ ուսանողներն օգտվում են «Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից» օժանդակ ձեռնարկից, որի ստեղծմանը որպես համահեղինակ մասնակցել է նաև Էլլադան:

Էլլադան նվիրյալ դասախոս է: Ժամանակին ընտրում է դասընթացային և ավարտական աշխատանքների թեմաները, կազմում պլանները, հանձնարարում ուսանողներին, հետևողականորեն ստուգում ու վերջնական տեսքի բերում կատարված աշխատանքները: Եվ բնական է, որ ուսանողները հարգում են իրենց սիրելի դասախոսին:

Կին գիտնականը գնահատվում է նաև որպես ընտանիքի հեռատես ու բոլորամբեր մայր: Տեղին է նշել, որ Էլլադան ամուսնու՝ հայտնի մարզիկ Սլավա Բաղդասարյանի ամենամանակ-անբուժելի մահից հետո դաստիարակել է իր երեք զավակներին՝ համբերատար փոխարինելով նրանց հորը:

Էլլադա Բաղդասարյանի գիտամանկավարժական եռանդուն գործունեությունը շարունակվում է արդյունավետ, նոր եռանդով: Նրա գործընկերների անունից սրտանց շնորհավորեմք ծննդյան 60 և մանկավարժական գործունեության 40-ամյակը՝ ի փառս հայկական դպրոցի համար ուսուցչական նոր մասնագետների պատրաստման ու մանկավարժության զարգացման:

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԼՂԳ գիտության վաստակավոր գործիչ

ՄԵՐ ԼԵՉՈՒՆ ՄԵՐ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Յ Երբ այդ մասին ասացի, Ստեփան Ներսիսյանը պահանջեց գնալ ամբիոնի մոտ և իմ կարծիքն արտահայտել: Ստացվեց իսկական բանավեճ: Ներկաներից ոմանք, այդ թվում և իմ ղեկավարը, որը նոր էր եկել և չէր կարողացել իմ աշխատանքը, ուզում էին տեղից օգնել ինձ, իսկ Ներսիսյանն ասաց.

- Մի լռեցեք է՛, խոսիր, աղջիկ ջան, խոսիր, վաղուց իսկական պաշտպանություն չէիրք տեսել:

Աշխատանքս գնահատվեց գերազանց: Բոլորիս սիրելին էր Աբգար Ռուբենի Հովհաննիսյանը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1960 թվականից փոքր ընդմիջումներով վարում էր ակադեմիայի փոխպրեզիդենտի պաշտոնը: Աբգար Հովհաննիսյանի գիտական ուսումնասիրությունները նվիրված են Ֆրանսիայի և հայ ժողովրդի պատմության նոր շրջանի պրոբլեմներին: Եվրոպական լեզուների ինստիտուտում, լայն և խոր պատրաստությունը հնարավորություն տվեցին նրան ստեղծելու ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարախոսության, ուտոպիստ-սոցիալիստների հասարակական-քաղաքական ուսմունքին նվիրված մեծարժեք մեծագրություններ: Նա Սորբոնի համալսարանում ֆրանսերեն դասախոսում էր ֆրանսիական բուրժուական հեղափոխության պատմությունը: Մասնակցել է հայ ժողովրդի, ԽՍՀՄ ժողովուրդների, համաշխարհային պատմության, խորհրդային պատմագիտական հանրագիտարանի բազմաազգար աշխատությունների ստեղծմանը, բազմիցս ներկայացրել խորհրդային պատմագիտությունը պատմաբանների միջազգային հավաքներում: 1974թ. արժանացել է ԽՍՀՄ ԳԱ Վ.Վոլգինի անվան մրցանակի և պետական պարգևների:

Հայոց լեզվի հմայքը, նրա անսպառ հարստությունն ու մեղեդայնությունը ես զգացել եմ ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի դասախոսություններին: Նրա շուրթերից հորդում էին ոսկեղենիկ հայոց լեզվի գոհարները: Բայց մի՞թե միայն լեզուն: Այդ լեզուն տանում էր մեզ Ֆրանսիա, դարձնում մեզ ֆրանսիական մեծ հեղափոխության, իսկ հետո նաև Նապոլեոնյան պատերազմի ճակատամարտերի մասնակիցն ու ակամատեսը:

Ես երախտագիտությամբ զլուխ եմ խոնարհում իմ ուսուցիչների և հրաշալի դասախոսների մեծության առջև, միշտ հիշում և աշխատում նմանվել նրանց:

Իմ մանկավարժական 50 տարվա գործունեության ընթացքում ես իմ աշակերտների, ուսուցիչների, ծնողների, ուսանողների հետ խոսել եմ գրական հայերենով: Մեր մանկավարժների խնդիրն է համարել արցախի երեխաներին սովորեցնել պատմություն և գրական հայերեն: Ինձ բախտ է վիճակվել աշխատել իմ հարազատ դպրոցում, որն ավարտել էինք հայոս և երեք երեք քույրերս: 70-ականների սկզբին դեռ դասավանդում էին իմ ուսուցիչները՝ Սաթիկ Սողոմոնյանը, Փնջիկ Հակոբյանը, Արամ Մարտիրոսյանը: Նրանք բոլորն էլ ուշադիր ու հոգատար էին իմ նկատմամբ:

Դասարանները մարդաշատ էին (30-35 աշակերտ), պատմության դասերը՝ 2-3 ժամ: Քառորդում գնահատելը դժվարացել էր, և ես որոշեցի քառորդային գնահատականները հիմնավորելու համար գրավոր հարցում կատարել: Երբ ուսուցչանոցում ստուգում էի տետրերը, ընկեր Մարտիրոսյանն ասաց. «Ուսուցչուհի՛, գրականության և լեզվի ժամերը շատ են կրճատվել: Աշակերտների բանավոր խոսքը զարգացնող երկրորդ առարկան պատմությունն է, որ դա էլ վերածվի գրավորի, ապա աշակերտների բանավոր խոսքն ինչպե՞ս պետք է զարգացնենք»: Նա իրավացի էր: Ես այդուհետ ավելի շատ ժամանակ հատկացնում էի բանավոր խոսքին՝ դասին օգտագործելով թե՛ գրատախտակը և թե՛ գրավոր հարցումները:

Ներկայումս հեռուստատեսությունն ու համակարգիչը և նրանցից ստացած տեղեկատվությունները շատերին են կտրում գրքից: Բայց լեզուն և մեզ անհրաժեշտ գիտելիքներն ամենար է սովորել առանց գրքերի: Լեզու և իմաստություն սովորեցնող հիմնական գիտելիքների աղբյուրը մնում է գիրքը: Մեր մեծ գրողներ Հովհ. Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Վ.Տերյանը, Ե.Չարենցը, Շիրազը, Ռաֆֆին, Մուրացանը, Շիրվանզադեն, Սուևողուկյանը, Սիամանթոն, Օերենցը, Մեծարենցը, Օտյանը, Հ.Պարոնյանը, Խանգաղյանը, Քոչարը և ուրիշներ մեզ ստիպում են կրկին ու կրկին ընթերցել իրենց գրքերը և ամեն անգամ նորովի ենք ընկալում դրանք: Մեր լեզվի հրաշալիքներից է Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացքը»: Մեզ համար կյանքի դպրոց է նաև թատրոնը: Ուսանողական տարիներին հանրակացարանի մեր սենյակի աղջիկներից երկուսը թիֆլիսցի էին, մեկը՝ Գյումրիից, մեկը՝ Ջավախքից, երկուսը՝ արցախցի, մեկը՝ Աշտարակից: Բոլորս միասին կարծես մի ընտանիք լինեինք: Չճայած մեր բարբառներին, իրար հետ խոսում էինք գրական հայերենով: Ես թիֆլիսցի Վեներայից առաջին անգամ լսեցի Պետրոսի մենախոսությունը թիֆլիսի լեզվի առաջանությամբ, իսկ Նելլիի մոտ եկող նրա ընկերուհի Լուիզան իսկական տոնական տրամադրություն էր ստեղծում գյումրեցու իր կատակներով, հումորով, անեկդոտներով: Մենք «ի՞նչխ» կարող էինք ապրել առանց նրա հումորի: Մենյակի աղջիկներով հաճախում էինք Սուևողուկյանի անվան թատրոն կամ օպերա, կինո: Ինձ բախտ է վիճակվել լսել Գոհար Գասպարյանին «Ամուշ» օպերայում, դիտել թատրոնում Հրաչյա Ներսիսյանի, Վաղարշ Վաղարշյանի, Դավիթ Մայրանի, Խորեն Աբրահամյանի, Մետաքսե Սիմոնյանի դերակատարումները: Ներկայացումներից հետո երկար ժամանակ աղջիկները քննարկում էին՝ իրենց հույզերն արտահայտելով:

Կարդալով մեր ոսկեդարյան պատմիչների ստեղծագործությունները՝ գիտակցում ենք, որ դրանք ոչ միայն պատմական աղբյուրներ են, այլև մեր հրաշք լեզվի գանձարաններ, որը խոսում է մեր գրաբար լեզվի հարստության մասին:

Մեր գրաբար, արևելահայ և արևմտահայ գրական լեզուները մեր ժողովրդի և ապագա մեր սերունդների համար գիտություն, լեզվի հարուստ աղբյուրներ են: Ինչքան շատ կարդանք, այնքան ավելի ուժեղ ու միասնական կլինենք:

Իսկ բարբառը համաժողովրդական լեզվի տեղական տարբերակն է, որ հղկվելով՝ դառնում է գրական լեզվի աղբյուր:

Ոչ ոք չի խանգարում մարդկանց զբաղվել բարբառագիտությամբ: Իսկ ես քարոզում եմ գրական հայոց լեզվի ինստիտուտը:

Լեւա ՄԻՋԱՅԵԼՅԱՆ
Թոշակառու մանկավարժ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՄԸ

ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԻՄՔԵՐԸ

Կրթության ոլորտի ներկա փուլի զարգացումները սերտորեն կապված են կրթական համակարգի զարգացման միջազգային միտումների հետ: Առաջ են քաշվում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ազատությունը, արդարությունը, հարգանքն ուրիշների հանդեպ և քաղաքացիական հասարակությանը բնորոշ այլ արժեքներ:

Սա ենթադրում է ազգային դպրոցի համապատասխանեցում ժամանակի պահանջներին, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածությունն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթական ծառայությունների հասանելիության խնդիրը միջազգային հանրության քննարկման ֆորումում հայտնվեց 1990-ականներին, երբ ընդունվեցին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում երկու կարևորագույն փաստաթղթեր՝ Երեխաների իրավունքների կոնվենցիան և «Կրթությունը բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը:

Ներառական կրթության (ՆԿ) գաղափարական և հիմնարկային սկզբունքների մշակումը տեղի ունեցավ 1994թ. Սալամանկայում ստորագրված համաձայնագրի շրջանակներում, որը վերահաստատվեց 2000թ. Սենեգալում Կրթության համաշխարհային ֆորումի ընթացքում: Սալամանկայի հռչակագրով և գործողությունների շրջանակով ամրագրվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԿՊԿՆ) երեխաների, երիտասարդների և տարեցների համար կրթության կազմակերպումը: Մասնավորապես, հռչակագրի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատուկություններ և կրթության հիմնարար իրավունք: 2005թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն շրջանառության մեջ դրեց երկու կարևորագույն հասկացությունների սահմանումները՝ «Ներառում» և «Ներառական կրթություն»: «Ներառում»-ը սահմանվեց իբրև բոլոր սովորողների կարիքների հասցեագրման ուղղված գործընթաց: ՆԿ-ն համապատասխանաբար սահմանվեց որպես գործընթաց՝ ուղղված ուսումնառողների բազմազանությունից բխող կարիքների բավարարմանը կրթության մեջ և կրթությունից մեկուսացումը նվազեցնելու միջոցով: ՆԿ-ն բնութագրվում է վեց առանձնահատուկություններով՝ 1. կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա, 2. կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով ու մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատուկություններից բխող կարիքների բավարարմանը, 3. դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական պլաններ, որոնք կապահովեն միասնականությունը և յուրահատկությունը, 4. դպրոցը պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար, 5. ՆԿ-ն ենթադրում է կրթական գործընթացների կազմակերպման ու կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, 6. ՆԿ-ն ենթադրում է աջակց կառույցների և ռեսուրսների ստեղծումը՝ ուսուցչական, աղմի-նիստրատիվ անձնակազմի, աշակերտների և ծնողների և ՆԿ համակարգի այլ շահառուների համար: ՆԿ-ն նպատակ ունի ապահովել որակյալ կրթություն՝ խտրականության ցանկացած ձևի բացառման միջոցով:

2008թ. ժնևում կայացած Կրթության միջազգային կոնֆերանսի 48-րդ համաժողովի շրջանակներում քննարկման դրված առանցքային դրույթները վերաբերվում էին ՆԿ հայեցակարգային հիմքերի զարգացմանը և ՆԿ քաղաքականությունների մշակմանը: Խնդրահարույց էին, մասնավորապես՝ «ՆԿ», «Կրթություն բոլորի համար» և «Կրթության մեջ ինտեգրում» հասկացությունները, որոնք համախառն ունյակացվում են, սակայն բովանդակվում են սկզբունքորեն տարբեր նպատակներ ու խնդիրներ: «Կրթությունը բոլորի համար» հայեցակարգը չպետք է նույնացվի «ՆԿ» հայեցակարգի հետ: Թեև երկուսն էլ ուղղված են կրթության հասանելիության բարձրացմանը, այդուհանդերձ, ՆԿ-ն նպատակ ունի ապահովել որակյալ կրթություն խտրականության ցանկացած ձևի բացառման միջոցով: ՆԿ-ն ավելի է, քան մասնակցությունը և հասանելիությունը: Այն կոչված է յուրաքանչյուրի անհատական կարողությունների զարգացմանը որակյալ կրթություն տրամադրելու միջոցով: ՆԿ-ն չպետք է նույնացվի մասնակցությունը» հասկացության հետ: Ինտեգրումն ապահովում է ԿԿՊԿՆ անձանց մաս-

նակցությունը կրթական գործընթացներում, իսկ ներառումը ամրագրում է որակյալ կրթություն ստանալու բոլորի իրավունքը: Ավելին, ինտեգրման դեպքում աշակերտներն իրենք պետք է հարմարվեն առկա դպրոցական համակարգին (առարկայական պլաններին, դասարանում մեթոդներին, արժեքներին և այլն): ՆԿ-ի դեպքում դպրոցն ինքն է փոխակերպվում, որպեսզի բավարարի յուրաքանչյուրի առանձնահատուկ կարիքները: Այսինքն՝ այս դեպքում ոչ թե աշակերտն է հարմարվում դպրոցին, այլ դպրոցն է հարմարվում աշակերտներից յուրաքանչյուրին:

Սկզբունքորեն ԱԳ-ում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտը հավասար պայմաններ ու հնարավորություններ են մատնատեսում յուրաքանչյուր սովորողի համար՝ ելնելով կրթության հասանելիության ու մատչելիության գաղափարից: Այս համատեքստում 2005թ. ԴԳ-ն 2007թ.՝ ԼԴԳ-ն վավերացրին օրենք, որով կարգավորվում է ԿԿՊԿՆ անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

Հայ դպրոցական սկզբնավորումից ի վեր, ինչպես բացահայտում են սկզբնաղբյուրները, խտրականությունը տեղ չի ունեցել կրթական դաշտում, ավելին, ուսյալ սերունդ ունենալը պետական գերխնդիր էր: 19-րդ դարում հայ մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանն առաջ քաշեց այն գաղափարը, որ բոլոր երեխաները պետք է սովորեն միասին՝ անկախ խուլ, կույր, հաշմանդամ, աղքատ կամ հարուստ, տղա կամ աղջիկ լինելու փաստից, և ուսուցիչները պետք է համապատասխան հմտություններ ունենան վերջիններիս հետ աշխատելու համար:

2010թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ-ում վավերացրեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որով ստանձնեց պարտավորություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը:

Տարիներ շարունակ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորված միասնակցաբարումները, անտարբերությունն ու վախճեքել են նրանց մեկուսացմանը և խոչընդոտել նրանց զարգացմանը: Մեկուսացումն իր հերթին բերել է նրան, որ մարդիկ, չունենալով բավարար գիտելիքներ, վախենում էին հաշմանդամություն ունեցող մարդկանցից՝ մտածելով, որ նրանք կարող են արեւելք լինել: Այսպես՝ 1760-ականներից եվրոպական պետություններում բացվում են առաջին հատուկ դպրոցները խուլ, համր կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Շրջանառության մեջ է դրվում «զգաճոցներ» հասկացությունը: Ռուսաստանի պարագայում Պետրոս Մեծի և Եկատերինա II-ի ժամանակաշրջանում մանկությունը պետության պաշտպանության ու հոգածության ներքո էր գտնվում, մեծ ուշադրություն էր դարձվում հաշմանդամություն ունեցող անձանց: Խորհրդային Միությունում 1960-ական թվականների կեսերից սկսեցին գործել առաջին հատուկ դպրոցները: 1975թ. ամենամեծ հատուկ դպրոցը մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար բացվեց Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում: 1980-ականների սկզբին Հայաստանում արդեն գործում էր 40 հատուկ դպրոց (բնակչությունը այդ ժամանակ կազմում էր 3 500 000):

Ներկայումս հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կան թե ակամա կիրառվում է երկու մոդել՝ բժշկական և սոցիալական:

Բժշկական մոդելը հաշմանդամությունը սահմանում է որպես բժշկական երևույթ (հիվանդ մարդ, ֆիզիկական ծանր վնասվածքներ ունեցող մարդ, ինտելեկտուալ խանգարումներ ունեցող մարդ և այլն): Հայաստանում խորհրդային ժամանակներից ի վեր հաշմանդամությունը համարվում է անձի խնդիրը, որը նշանակում է, որ հաշմանդամությունը հիվանդություն է, որի պատճառով անձի կենսագործունեությունը սահմանափակվում է, և, հետևաբար, ջանքերն ուղղվում են անձի ֆիզիկական վիճակի բարելավմանը: Այս մոդելի վրա հիմնված մոտեցման արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է հիվանդ, խնամյալ: Նրա փոխարեն որոշում են կայացնում ուրիշները (խնամողը, ընտանիքը, հասարակությունը), սահմանափակվում են կրթության, մասնագիտության, աշ-

խատանքի և այլ հնարավորությունները:

Հաշմանդամություն ունեցող մարդու կյանքը կախված է մտնել ուրիշների կարծիքներից և եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում հասարակական կյանքին լիարժեք մասնակցությանը: Այսպիսով, բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերն ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը:

Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել լիարժեք մասնակցության հնարավորություններ հասարակության բոլոր քաղաքացիների համար: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտումների վերացման վրա և վստահում հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու, կարողություններին ու ներուժին:

Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումն էլ հենց կազմում է ՆԿ առանցքը, այն է՝ կրթություն և համայնքային մասնակցություն բոլորի համար, համակարգի հարմարեցում երեխային, խտրականության բացառում: ԿԿՊԿՆ անձը կամ երեխան ճանաչվում է բժշկահոգեբանամանկավարժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա (Արցախում այդ գործառույթն իրականացնում է ԿԿՍ Մախարաթյան ԳԹԿ մանկավարժաժողովական աշակերտության բաժինը): Նրանց ուսուցում կազմակերպման, կարողությունների, հմտությունների ձեռքբերման համար տրամադրվում է մանկավարժաժողովական խմբի աջակցություն՝ հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խումբը միատարր խումբ չէ, և մեծամասամբ նրանց կարելի է տարբերակել այնպիսի բնորոշիչներով, ինչպիսիք են հաշմանդամությունը, տնտեսական կարգավիճակը, էթնիկական պատկանելությունը, կամ վերջիններիս համադրությունը: Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգուլում են հետևյալ երեխաները.

- ա/ խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչության և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող,
- բ/ լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող կամ լսողության կորուստ ունեցող,
- գ/ տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսող, ուշ կուրացած, շլուրթուն ունեցող,
- դ/ մտավոր հետամնացություն ունեցող,
- ե/ հենարժակալի համակարգի խախտումներ ունեցող,
- զ/ հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող,
- է/ վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող:

ԼԴԳ կառավարության 2016թ. դեկտեմբերի 2-ի 775-Ն որոշմամբ սահմանվել է ԿԿՊԿՆ անձանց մտային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը:

Արդյունավետ ներառում իրականացնելը ենթադրում է ծնող-երեխա-դպրոց առանցքի փոխկապակցության վրա հիմնված սերտ համագործակցություն: Անկախ այն հանգամանքից, թե որ խմբին է պատկանում երեխան, կրթական գործընթացի ողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում ուսուցիչը: Ուսուցիչ մասնագիտությունն առավել մարդկային և ստեղծագործական մասնագիտություն է, և ուսուցիչն է պատասխանատու յուրաքանչյուր աշակերտի անձի ձևավորման գործում ճիշտ հիմնաքար դնելու համար: Սակայն ոլորտի ուսումնասիրությունները թույլ են տալիս արժանազան հակասական գնահատականներ: Չնայած ՆԿ հասկացությունը հայ կրթական դաշտ է մտել 2001-ից, երբ երևանի թիվ 27 միջնակարգ դպրոցի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքվեց եռակողմ համաձայնագիր, որի համաձայն դպրոցը ճանաչվեց հանրապետությունում ներառական կրթություն իրականացնող առաջին համարկրթական հաստատություն, առ այսօր գաղափարական առումով միանշանակ վերաբերմունք չի գրանցվել: Այստեղ առաջնային է ուսուցիչների համար համապատասխան գիտելիքներ, հավելյալ ժամա-

նակ ու մոտիվացիա չունենալու հանգամանքը: Մյուս կողմից՝ աջակցող խմբերի մանկավարժները նույնպես համապատասխան վերապատրաստումների կարիք ունեն, դպրոցներն էլ չունեն համապատասխան միջավայրային հարմարեցումներ:

Փորձն այսօր ցույց է տալիս նաև, որ ներառական կրթահամակարգում ընդգրկված հատուկ կարիքներով սովորողի առաջադիմությունն ու հաջողությունները կախված են ոչ միայն երեխայի ընդունակությունից կամ ներգրավված մասնագետների որակավորումից, այլ նաև ծնողի՝ իր երեխայի հանդեպ ունեցած վերաբերմունքից, դիրքորոշումից: 2013-2014թթ. իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները պարզել են, որ նման ընտանիքներում ծնողների մեծ մասը չի ընդունում, հուզականորեն մերժում է իր երեխային, չի հարգում նրա անհատականությունը, չի համակրում նրան, նրանց համարում են անհաջողակներ: Միայն ծնողների չնչին տոկոսն է, որ երեխային ընդունում են այնպիսին, ինչպիսին է: Այս երևույթը միանշանակ ձևավորվում է ծնողների ցածր ինքնագնահատականից, որն էլ իր ազդեցությունն է ունենում երեխայի ինքնաընդունման գործոնի վրա:

Նման պարագայում ներառական կրթություն կոչված է ապահովելու երեխայակենտրոն կրթություն, որտեղ առաջնայինը երեխայի անձնային որակների զարգացումն է՝ հօգուտ նրա, համայնքի, ապա և հայրենիքի ապագայի: Մասնագետները նշում են, որ ներառական կրթության ծրագրի շրջանակներում ընդգրկված սովորողները կարողանում են ինտեգրվել հասարակությանը, միջանձնային հարաբերություններում ազատվել թերաբժեքության բարդությունից, ձեռք բերել համագործակցելու, խնդիրներ լուծելու հմտություններ: Ոչ հաշմանդամ երեխաների մոտ էլ ձևավորվում են գթասրտության, ուրիշներին օգնելու, ապրումակցելու պատրաստականություն, «ոչ իրենց մանկների» հանդեպ հանդուրժողականության զգացում և այլն:

Համաշխարհային փորձն այսօր հուշում է, որ միմիայն օրենսդրական դաշտի ապահովումը ներառական կրթության արդյունավետ իրականացման գրավական չէ: Նույնիսկ զարգացած պետությունները ցուցաբերում են մեծ զգուշություն՝ «օգնել առանց վնասելու» նկատառումով: Այս պարագայում հետաքրքիր են թվական ցուցանիշները. 2016-2017թթ. ՌԴ-ում ներառական կրթություն են իրականացնում 11 հազ. դպրոցներում, Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 291-ն է պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնող, ընդգրկված երեխաների թիվը մոտ 7000 է: Արցախում գործող 216 դպրոցներից ներառական կրթություն իրականացնում է 98 դպրոցներում, 23200 աշակերտներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի 416 սովորող:

Բազմաթիվ բարեփոխումներն այսօր բերել են նրան, որ ներառական կրթության լավագույն փորձը Հայաստանում դիտարկելի է տարրական դասարանում, սակայն դեռ պետք է մշակվի այնպիսի համակարգ, որը կապահովի որակից առնելով երեխայի զարգացման վրա ազդող սոցիալ-տնտեսական պայմանները, մշակութային առանձնահատկությունները: Ներառական կրթության ընդդիմախոս զանգվածի մոտ կարծրատիպային մտածելակերպի փոփոխումն առաջնահերթ է:

Ներառական կրթության իրականացման հաջողված փորձ ունեցող պետությունների դպրոցների շարքում այսօր առանձնանում է ֆիննականը: Հաջողության գրավականն այս համակարգում համարվում է բարձր որակավորում ունեցող, պատրաստական, մոտիվացված ու անկախ ուսուցիչների առկայությունը:

Կանադայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի և շատ եվրոպական պետությունների՝ ոլորտում ունեցած փորձն ամրագրում է, որ ներառական կրթության ճիշտ ներդրման պարագայում երեխաները կայանում են սոցիալապես, արդարացիվում սոցիումից, կարողանում են ձեռք բերել աշխատանք ծառայությունների մատուցման ոլորտում (ճաշարան, խանութ, հյուրանոց):

Հետևելով Հայաստանի օրինակին՝ 2016թ. մարտի 10-ին ԼԴԳ կառավարությունը ՈՑԿ-ն որոշմամբ նախատեսեց մինչև 2022թ. անցնել համընդհանուր ներառական կրթության համակարգի:

Լեւա ՍՈՒԵՅԱՆՅԱՆ ՄՄԶ, պարմության ամբիոնի դասախոս, սոցմանկավարժ

ՄՆԱԿՈՒՅՑ

ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇՅԱՆ. «ԵՆ ՄԻՇՏ ՊԻՏԻ ՎԵՐԱՂԱՌՆԱՄ»

Արցախի մշակութային կենտրոնի կարգա-վիճակին հավակնող ազատագրված Շուշին օրավուր թոթափում է օտարի հետքերն իր երկնամերձ բարձունքներից և հայրեն է շնչում: Նորացող բերդաքաղաքի մշակութային հին արժեքների կողքին համուն են նորերը, որոնք մերօրյա իրականության խորհրդանիշները դառնալու միտում ունեն: Վերջիններիս շարքում է «Վարանդա» մանկական, պատանեկան և երիտասարդական պետական երգչախումբը, որը Շուշիի ազատագրման տարեկիցն է: Վստահաբար քաղաքի նորագույն խորհրդանիշներից կարելի է համարել և երգչախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և խմբավար Զաքար Քեշիշյանին, ով 1992-ից ի վեր դարձել է նրա անբաժան մասնիկը: Գեղարվեստական և մանկավարժական ավանդույթները զուգահեռաբար զարգացնելու «երգող ամառների» քաղաքի: Արդեն 26 տարի անխախտ ավանդույթով, որպես նվիրյալ ուխտավոր, պրն Զաքարը՝ նախ մենակ, ապա ընտանիքով ամառներն այստեղ է, իրեն հարազատ դարձած մեծ ու փոքր շուշեցիների կողքին և իր խոստովանությամբ. «Ես եկել էի մի մոմ էլ ինքս վառելու, մի քար էլ ինքս դնելու, մի կաթիլ քրտինք էլ ինքս կաթցնելու, մի արցունք էլ ինքս սրբելու, մի ժպիտ էլ ինքս ուրվագծելու, պատերազմում ապրող մանուկների շուրթերին մի երգ էլ ինքս դնելու»: Գաղափարներն է, որ հիմնադրման օրվանից երգչախմբում երգել են ավելի քան 600 պատանիներ ու երիտասարդներ, որոնցից շատերի համար երաժշտությունը մասնագիտություն է դարձել: Խմբավարի նրա աշխատանքի սկզբունքներից մեկն այն է, որ ամեն տարի երգչախումբը նոր համերգային ծրագրով է ողջունում իր համդիսատեսին:

Ելույթ ունեցավ երիտասարդական երգչախումբը: Զամերգի վերջին մասում երգչախումբը հանդես եկավ համատեղ՝ պատանեկան ու երիտասարդական կազմով: Զ. Քեշիշյանն այս անգամ էլ փայլեց համերգավարի անուրանալի ծիրով՝ անմիջական խոսքով ու հուժկով համեմելով ներկայացվող ծրագիրը, երաժշտական համարներն աղբյուրով հորել-յաններին, ինչպես՝ «Ամմահների կանչը» (երաժշտ.՝ Արմենուհի Կարապետյանի, խոսք՝ Աշոտ Զունանյանի) և «Ղարաբաղցին» (երաժշտ.՝ Ալ. Գեքիճյանի, խոսք՝ Զր. Բեգլար-

- Պարոն Զաքար, շնորհավորում ենք հոբելյանի առթիվ, մաղթում ստեղծագործական անսպառ եռանդ, նորանոր հաջողություններ: Ինչ-որ բան փոխվե՞ց 50-ից հետո:

- 21, պարզապես հիմա, 50-ից հետո, ներքև պիտի իջնեմ՝ 49, 48, 47... Այդպես է, չէ՞...

- 26-ը նայելով դժվար է հավատալ, որ 50 տարին կես դար է:

- Եթե այդպես է, ուրեմն երջանիկ եմ:

- Շնորհավորում ենք նաև ԱԶ արվեստի վաստակավոր գործչի կոչում ստանալու առիթով: Ինչպե՞ս եք վերաբերվում մեծ արժանատիներին:

-Նախ, զգացված եմ պրն Նախագահի, ԱԶ կառավարության ուշադրության համար: Անշուշտ, Արցախում պարզևի արժանանալը այլ է, ինչ արտասահմանում, որովհետև այնտեղ օտարների համար դրանք փառաց դափնիներ են, իսկ Արցախում՝ նոր մարտահրավերներ, որպեսզի մենք առավել միասնակամորեն, ավելի մեծ եռանդով, մեծ ծիրով ու խելքով նվիրվենք մեր առաքելությանը, քանզի սիրում ու ծառայում ենք մի ժողովրդի, ով անկախություն է կերտել, ով պատերազմ է հաղթել, ով խաղաղության է

- Նախ ասեմ, որ մեր տղան «փողոցային շուշեցի» դարձավ և արցախի բարբառը լավ սովորեց, ինձնից լավ է խոսում, որովհետև ամբողջ օրը ընկերների հետ խաղում էր դրսերում: Դա իմ մեծագույն ուրախություններից մեկն է: Տարին նշանավորվեց նաև մեր ընտանիքի համար. տիկնոջս՝ Կամիլայի գրքի՝ «Ծաղկած ցավ» բանաստեղծական ժողովածուի արցախյան գինեծոնով: Ուրախ եմ, որ նոր գիրք ծնվեց մեր ընտանիքում, ուրախ եմ, որ երևանյան գինեծոնից հետո և վանածորյան գինեծոնից առաջ նաև Արցախի մտավորականության ուշադրության, դատի՞ն ասեմ, թե՞ վայելքին, համեմվեց նաև այդ գիրքը: Նշանավորվեց նրանով, որ «Վարանդա» երգչախմբի ընտանիքին միացավ մի նոր շնորհալի աղջիկ, և հուսով եմ, որ Մարիամ Բեգլարյանը մի քանի տարի հետո ևս անկախություն կհռչակի, կունենա իր ստեղծագործական ձեռագիրը, իր ստեղծագործական կյանքը, իր երգչախումբը: Ժամանակի ընթացքում մենք միշտ առիթներ ենք տվել երիտասարդներին, որ նրանք էլ քաջալերվեն և կայանան, օրինակ՝ Վիոլետա Բախշյանը՝ տարբեր երկրների միջազգային մրցույթների դափնեկիր, Ռաֆֆի Միքայելյանը՝ իմ եղբայրն ու իմ ուսանողներից, Թամար Փայլակյանը՝ առաջին տարիներից, Կարինե Զովսեփյանը, Կարինե Գրիգորյանը, Լուսինե Գայանյանը: Նրանց շարքը լրացրեց այսօր Մարիամ Բեգլարյանը՝ որոշ փորձառություն ունենալով Սոս, Տոդ գյուղերում և ճարտարում, նաև «Վարանդա» երգչախմբին միացավ այս տարի, իրեն ևս ես բարի երթ եմ մաղթում: Նրանք բոլորը երգել են երգչախմբում, հետո «անկախություն հռչակել» և կայացել որպես խմբավարներ:

- Այս համերգը առանձնատուկ էր նաև այն առումով, որ երգերի հեղինակներից մի քանիսը ներկա էին:

- Այո, անցած տարիներին մեծաթիվ կոմպոզիտորներ, հատկապես առաջին տարիներին, գալիս էին համերգներին, փոխադարձից այդ երգերը ես ինձ հետ տանում էի Լիբանան, «Կարկաչ»-ն էր երգում, «Այգ»-ն էր երգում, և այդ լավագույն ավանդույթները շարունակվում են: Այս տարվա ծրագրի շրջանակներում մենք կատարեցինք ժիրայր Շահիրմանյանի, Արմենուհի Կարապետյանի երգերը և իմ երբեմնի դասընկերոջ՝ գորիսեցի Աշոտ Արիյանի, որին 20 տարուց ավելի չէի տեսել, վերագտանք իրար, և ինձ մատուցեց «Երկիր հայրենի» երգը, որ կատարեցինք: Նշանավորվեց հատկապես Յուրի Սահակյանի՝ մշակույթի վաստակավոր գործչի կոչումով: Նա, ինչպես և Ստեփան Շաքարյանը, արցախից է, ապրում է Երևանում, այժմ վատառողջ է, չկարողացավ գալ և հակառակ նրա, որ անկողնային հիվանդ է, մտքի պայծառությունն ու լավատեսությունը, իր բարությունը, ժպիտն ու դիմադրողականությունը երբեք չի կորցրել:

- Ինչո՞ւ այս տարի «Վարանդան» Ստեփանակերտում համերգով հանդես չեկավ:

- Անցած տարի ես ասել էի, որ յուրաքանչյուր 25 տարին մեկ պիտի արձակուրդ վերցնեմ, սակայն այդ մեկն էլ չստացվեց, հետևաբար մնաց յուրաքանչյուր 50 տարին մեկ արձակուրդ վերցնելու: Բայց այս տարի մի քիչ արձակուրդայինի պետք ունեի, մի քիչ հանգստանալու, և այդ պատճառով սահմանափակվեցինք Շուշիի համերգով, հաջորդ տարի կվերսկսեմք ստեփանակերտյան համերգները, նաև արցախյան տարբեր շրջաններում ու երևանյան շրջագայությունների մեր ծրագրերը:



յանի) երգերը հնչեցին Շարժման 30-ամյակի, «Գարուն Երևան» (երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի, խոսք՝ Ա. Գրաշուն) և «Երևան-Երեբունի» (երաժշտ.՝ Է. Զովհաննիսյանի, խոսք՝ Պ. Սևակի) երգերը, Երևանի 2800-ամյակի, «Սարդարապատ» (երաժշտ.՝ Է. Զովհաննիսյանի, խոսք՝ Պ. Սևակի) երգը՝ Առաջին Զանգազատի 100-ամյակի համատեքստում: Ծրագրին համահունչ էր նաև «Երկիր հայրենի» երգի առաջնությունը, որի երաժշտության հեղինակը Զ. Քեշիշյանի ուսանողական ընկերն էր, որը ներկա էր համերգին: Ավանդույթի համաձայն՝ համերգը եզրափակվեց «Երազի իմ երկիր հայրենի» երգի բացօթյա կատարմամբ:

Զատկանշական է, որ համերգն իրենց ներկայությամբ պատվել էին «Վարանդայի» համար ստեղծագործող հեղինակներից Արմենուհի Կարապետյանը, ժիրայր Շահիրմանյանը, Աշոտ Զունանյանը, Աշոտ Արիյանը: Ի դեպ, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, կոմպոզիտոր Արմենուհի Կարապետյանի և երգչախմբի համագործակցությունը ամենաերկարն ու ամենաբերդունն է: Կոմպոզիտորը խմբի ստեղծման առաջին տարիներից է երգեր գրում հատուկ նրա համար, թեև ստեղծագործում է նաև հայաստանյան ու սփյուռքահայ երգչախմբերի համար ևս:

Երգչախմբի լավագույն բարեկամներից է արմատներով արցախցի բանաստեղծ Յուրի Սահակյանը, ում որդին ներկա էր համերգին: Զանգազատի անվան հայկական հրամանագրով բանաստեղծին շնորհվել է մշակույթի վաստակավոր գործչի կոչում. պարզևի բանաստեղծի որդուն՝ Զակար Սահակյանին հանձնեց մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեոնիդ Զովհաննիսյանը: Գերատեսչության ղեկավարը շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց նաև խմբավարին՝ հանրապետության, հատկապես Շուշիի մշակութային կյանքի զարգացման գործում մեծ ավանդի համար: Շուշիի շրջվարչակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Անահիտ Եսայանը իր և շրջվարչակազմի անունից շնորհավորեց Զ. Քեշիշյանի 50-ամյակը՝ ընդգծելով նրա ավանդը Շուշիի հոգևոր վերածննդի գործում: Զբեկյարն այդ երեկո նվերների պակաս չունեց:

Զավատարիմ մնալով տարիներ ի վեր ձևավորված ավանդույթին՝ «Վարանդա»-ի մասին մեր խոսքն ամբողջացնում ենք Զ. Քեշիշյանի հետ փոքրիկ հարցազրույցով:



ծգուում, ով ամրապնդել է իր քաղաքաշինությունը, ազգային կառույցները՝ կրթական, մշակութային և նոր սերնդի հոգեմտավոր ու ազգային դաստիարակության հիմքերը: Դա այն ժողովուրդն է, որի համար արժե է մեռնել, և՛ ապրել:

- Այս տարի խմբավարի խոսքը վերնագրել էիք «Վերջակետ, նոր տող...»: Ինչո՞ւ:

-Այսինքն՝ քառորդ դարը մենք եզրափակեցինք, Երևանում համերգներ տվեցինք պատանեկան և երիտասարդական առանձին կազմերով, այստեղ համերգաշարով հանդես եկանք, երգեցինք մեր երգացանկից մի ընտրանի, որը հատկապես մեզ համար էր գրված: Եվ այժմ իմ ուրախությունը մեծ է, որ այդ երգերը տարածվում են նաև տարբեր երկրներում, տարբեր երգչախմբերի երգացանկերում: Իմ կարծիքով՝ դա ամենամնայուն արժեքն է, որովհետև երգողը փոխվում է, խմբավարը փոխվում է, ունկնդիրը փոխվում է, յուրաքանչյուրը իր ժամանակին այդ բոլորով ներշնչվում, ապրում, ոգևորվում է, սակայն մնում է երգը՝ նորահաս սերունդների համար: Իբրև մնայուն արժեք՝ այդ հարյուրից ավելի երգերն են, որոնք մնացին: Վերջակետից հետո նոր տող ենք սկսում ասելով՝ նկատի ունեմ, որ երգչախմբի երգացանկը կփոխվի, անդամները կփոխվեն, մի օր էլ խմբավարը պիտի փոխվի, սակայն կյանքը պիտի շարունակվի, և երգչախմբերը Արցախում պիտի շարունակեն երգել: Ոչ միայն «Վարանդայի» մասին է խոսքը, այլև արվեստում բոլոր բնագավառների՝ լինի նկարչություն, թատրոն, կերպարվեստ, պարախմբեր, որոնք կան և օրավուր որակավորվում են. այդ բոլորը պիտի շարունակվի: Իսկ իմ պարագայում՝ որքան ժամանակ իմ կարիքը կլինի, ես միշտ պիտի վերադառնամ:

- Ամառ-2018-ը ինչո՞վ առանձնացավ:

ՌԻՍՈՒՄ ԵՎ ՍՊՈՐՏ

ԶՓՆՏՐԵՆԷ ՊԱՏՃԱՌՆԵՐ, ԳՏՆԵՆԷ ՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մեկնարկել է նոր ուսումնական տարին, որի հետ մեկտեղ սկսվում են նաև ծանրաբեռնված օրերը ինչպես աշակերտների, այնպես էլ նրանց ծնողների համար: Երեխաներին դպրոց ուղարկելու, դասերից հետո պարապմունքների տանելու, տնային հանձնարարությունները կատարելիս օգնելու հոգսերից բացի կան նաև երեխաների հանգստի ժամանակը, ֆիզիկական ակտիվությունը ճիշտ ապահովելու խնդիրներ: Որոշ ծնողները համար երեխայի կենսակերպի մեջ սպորտային պարապմունքները պարտադիր մաս են կազմում: Այդ մտածելակերպն ունեցող ծնողներն ամեն ջանք գործադրում են սպորտը երեխայի դասերի հետ համատեղելու համար: Իսկ ոմանք ետին պլանում են դասում իրենց երեխայի ֆիզիկական ակտիվությունը՝ պատճառաբանելով, որ առանց այդ էլ երեխաները շատ են ծանրաբեռնված դասերով: Ինչո՞ւ է կարևոր դպրոցական ֆիզիկական ակտիվությունը, ի՞նչ բացասական հետևանքներ կարող է ունենալ սպորտով զբաղվելն արգելելը, արդյոք ինչպե՞ս են ազդում մարզական պարապմունքները ուսման վրա: Այս եւ նման հարցեր պարզաբանեցինք Արցախի «Օյաճա» կիոկուշին կարատե դո ֆեդերացիայի, ԳՄՄՄԴ կիոկուշին կարատեի մարզիչ (սեւ գոտի առաջին դաս) Արմեն ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ:

Արմեն Պետրոսյանը կիոկուշին կարատեն Արցախում հինք դնելու, զարգացնելու և մասսայականացնելու գործընթացի ջատագովն է: Ներկայում կիոկուշին կարատեով Արցախում զբաղվողների թիվը հասնում է 300-ի, որից 54-ը ավելի քան տասը տարվա մարզական գործունեության փորձ ունեցող, սիրված մարզիչ Արմեն Պետրոսյանի սաներն են: Նրա մոտ կոփվող 6-16 տարեկան սաների մեջ կան բազմակի չեմպիոններ, ինչպես նաև առարկայական հանրապետական օլիմպիադաներում բազմիցս մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտներ:

- Արմեն, ինչպե՞ս են ազդում մարտարվեստի պարապմունքները սաների՝ դպրոցում ցուցաբերած առաջադիմության վրա:

- Մարտարվեստի պարապմունքները կրթական առաջադիմության վրա միանգամայն դրական են ազդում: Այն, որ մարտարվեստը ոչ միայն ֆիզիկական ակտիվություն է, այլև ինտելեկտուալ եւ հոգեւոր զարգացման միջոց: Բացի ֆիզիկական օգուտից, որը տալիս է մարտարվեստով ակտիվ պարապելը, մարզիկներն ստանում են նաև բարոյաէթիկական կրթություն ու դաստիարակություն, դառնում ավելի կարգապահ, կարողանում են իրենց ժամանակը ռացիոնալ բաշխել օրվա մեջ, վարում են առողջ ապրելակերպ, ինչը չի կարող դրական չանդրադարձնալ նրանց ուսումնառության վրա:

- Կարո՞ղ եք ավելի մանրամասն մեկնաբանել՝ ինչ են ներառում ֆիզիկական, ինտելեկ-

տուալ, հոգեւոր ուղղումները Ձեր պարապմունքների շրջանակում:

- Ֆիզիկական ակտիվությունը անհրաժեշտ է երեխային ֆիզիկական առողջությունը պահպանելու համար: Եթե երեխայի զբաղվածությունը լինի միայն դպրոց գնալը, տնային հանձնարարությունների կատարման համար դպրոցից հետո պարապմունքի գնալը, իսկ մնացած ժամանակը համակարգչի կամ ժամանակակից այլ գրավիչ վեբ-սայտեր, սարքավորումներով խաղալու վրա վատնի, կարող են մկանների, հեմաշարժիչ համակարգի խնդիրներ առաջանալ: Մարտարվեստը նպաստում է օրգանիզմի նորմալ աճին, ուժեղացմանը, զանազան խնդիրների կամխմանը: Մարզունենքի ժամանակ օգտագործում ենք երկրաչափական տերմիններ, օրինակ՝ եռանկյունի, ներքնածիգ, ավելի պատկերավոր բացատրում, թե ինչպես կարելի է գիտելիքներն օգ-

տագործել մենամարտերում մեջ, այսինքն՝ տեսական գիտելիքները դարձնում ենք գործնական: Անատոմիական գիտելիքներ նույնպես ձեռավորվում են: Մարզիկը ճանաչում ու սովորում է մարմնի կառուցվածքը, օրգանների աշխատանքը, թե որ տեղին կարելի է խփել հարված, որտեղին՝ ոչ, սովորում կամխատեսել իր գործողությունների հետեւանքները: Նա դառնում է պատասխանատու, կազմակերպված, լավ վարքագիծ ու մտավոր կարողություններ ցուցաբերում շրջապատում, դպրոցում, բանակում, կյանքում:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք ծնողներին, որոնք իրենց երեխաներին մարզական պարապմունքների խմբակ չեն ներգրավում՝ չկարողանալով կարգավորել առանց այն էլ դասերով ծանրաբեռնված գրաֆիկը, կարծելով, որ երեխան չի հասցնի:

- Իմ կարծիքով, մնան դիրքորոշում ունեցող ծնողները պարզապես միջոցներ են փնտրում արդարացնելու իրենց երեխայի կրթական ցածր առաջադիմությունը կամ պարզապես չեն գիտակցում սպորտի կարևորությունը, փոխարեն՝ իրենց երեխաների ընդունակությունների բացահայտման, ինքնադրսեւորվելու, առաջ գնալու հնարավորություններ փնտրելու: Իսկ այդ հնարավորությունները միշտ կան: Բերեմ իմ օրինակը. 4-րդ դասարանից պարապում են մարտարվեստով, երբեք որեւէ առարկայից պարապմունքի չեն գնացել, դպրոցն ավարտել են գերազանցությամբ: Իմ սաներից շատերը բարձր առաջադիմությամբ են սովորում դպրոցում, իսկ մարտարվեստով պարապելն ավելի շատ խթանում է դրան: Խորհուրդ եմ տալիս չարգելել երեխային սպորտով զբաղվել, հատկապես երբ երեխան ինքն է ցանկանում որեւէ մարզաձեւով պարապել: Պետք է կատարել զբաղվածության ռացիոնալ ժամաբաշխում, հետաքրքրվել եւ գտնել այնպիսի մարզիչ, որը պարապմունքներն անց է կացնում հարմար ժամի, հարմար տեղում, ուշադրություն է դարձնում մարզիկի համակողմանի զարգացմանը, ուսման մեջ առաջադեմ լինելուն:

- Լինելով փորձառու մարզիչ, դաստիարակելով չեմպիոններ, որոնք, ի դեպ, ուսման մեջ բարձր ցուցանիշներ են արձանագրում՝ Ձեզ վրա պատասխանատվություն եք զգում ուշադիր լինելու եւ խթանել սաների առաջադիմությունը դպրոցում:

- Չեմ կարող ասել, որ պարտավորված եմ զգում, բայց հետեւում եմ դրան: Հաճախակի

պահանջում են, որ ցույց տան օրագրերը: Լավ գնահատականները խրախուսվում են իմ կողմից: Քննարկում ենք, թե ինչպես են իրենց դրսեւորում դպրոցում, ինչ վարքագիծ են ցույց տալիս: Մարզիչ խրախուսանքն իր սաների համար լավագույն մոտիվացիան է, որն ստանալու համար մարզիկը շահագրգռված կսովորի դասերը: Եթե անուշադրության մատնվեն մարզիկի առօրյա խնդիրները, պարտականությունների կատարմանը հետեւելն ու շահագրգռելը, ապա վրդ թե ուշ որոշ ծնողներ կվճռեն, որ ավելի լավ է հանել երեխային մարզական խմբակից: Իհարկե, ուսումը միշտ առաջին տեղում է: Ինչո՞ւ գրկել սաներին մարզվելու հնարավորությունից, գրկվել մարզիկներից, երբ կարելի է հակառակը՝ օգնել նրանց տարբեր հարցերով եւ աջակցել ծնողներին:

- Ձեր մարզական գործունեության ընթացքում տարբեր բնավորություն եւ խառնվածք ունեցող շատ սաներ եք դաստիարակել՝ համախմբելով նրանց մարտարվեստի ընդհանուր սկզբունքների շուրջ: Կարո՞ղ եք ասել՝ ինչո՞ւ է տարբերվում մարտարվեստով պարապող մարզիկը սպորտով չզբաղվող հասակակիցներից:

- Առաջին հերթին՝ կարգապահությամբ, օրվա ռեժիմի ճիշտ դասավորվածությամբ: Մարտարվեստով պարապող մեր սաներն առանձնանում են իրենց համզայն հոգեվիճակով: Հատկապես դեռահասության շրջանում բնականաբար առաջացող ագրեսիան իր սպառնումն է ստանում մարտարվեստի միջոցով, ներքին էներգիան ճիշտ ուղղորդում է գտնում, մարզիկը դառնում է հոգեպես ներդաշնակ, կարողանում է կարճ ժամանակում ճիշտ որոշում գտնել ինչպես մենամարտերի ժամանակ, այնպես էլ իր առջև դրված ցանկացած խնդիր լուծելիս: Եթե ծնողներն իրենց երեխաներին չեն անդամագրում որեւէ սպորտային խմբակի կամ արգելում են նրանց պարապել, այդ դեպքում հնարավոր են բացասական հետեւանքներ: Կուսակված էներգիան սպառնում էլք չգտնելով՝ երեխան կարող է ձեռք բերել վնասակար սովորություններ, ընկնել վատ շրջապատ: Ուստի, պատճառներ չկհնարենք, այլ գտնենք հնարավորություններ երեխայի ֆիզիկական ակտիվությունը, մարզական պարապմունքների հաճախելն ապահովելու համար:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բնագիտական առարկաների մասով ստեղծված ճգնաժամային վիճակը լուծելի հետևյալ կերպ. քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա և ինֆորմատիկա մասնագիտությամբ բուհ ընդունված շրջանավարտներին տալ 50000-ական դրամ կրթաթոշակ և տան վարձ, իսկ բուհի ավարտելուց հետո գործուղել դպրոց և անկախ ժամաբանակից վարձատրել մեկ դրոյթաչափին համարժեք: Վստահ եմ, որ մի քանի տարվա ընթացքում այդ մասնագիտությունների մասով խնդիր չենք ունենա: Առարկայական օլիմպիադան ինքնապատասխան չդարձնելու համար առաջարկում եմ, որ ավարտական դասարանների աշակերտների բարձր ցուցանիշները ինքն հանդիսանան նույն մասնագիտությամբ բուհ ընդունվելու համար՝ առանց միասնական քննությունների մասնակցելու:

Շրջանավարտը պետք է ընդունվի բուհ՝ ցուցաբերելով համապատասխան գիտելիքներ և այն ավարտի՝ ունենալով գիտելիքների համապատասխան պաշար, որն այսօր դեռ չի դիտարկվում: Չի դիտարկվելու այնքան ժամանակ, քանի դեռ դասախոսի աշխատավարձը ձեռավորվում է նաև ուսանողի վարձավճարի հաշվին:

Սովորական քաղաքացուց մինչև նախարարներ և կառավարության անդամներ խոսում և ներկայացնում են իրենց առաջարկությունները կրթական համակարգում բարեփոխումներ կատարելու մասին, սակայն ոչ ոք չի խոսում այն մասին, թե ով է դա իրականացնելու, այսինքն՝ ուսուցչի մասին խոսող չկա, չնայած նա է այդ բարեփոխումներն իրականացնողը, իսկ նա մեծամասամբ դրան պատրաստ չէ: Ահա այս հարցը պետք է լուծել, որպեսզի լուծվեն մնացածները, սա է հիմնական բանախի: Չլուծեցինք ուսուցչի պատրաստման հարցը, դրա համար էլ վերջին 25 տարում բոլոր բարեփոխումները եկան նախորդի թերությունները վերացնելու, այլ ոչ թե կոնկրետ արդյունք ապահովելու:

Համընդհանուր բարձրագույն կրթությունը ճգնաժամային վիճակի է հանցրել և՛ տնտեսականում, և՛ երկրի ժողովրդագրական վիճակը. առաջին դեպքում ընտանիքի վաստակած հիմնական գումարները գնում են ուսման վարձի, տան վարձի, տրանսպորտի, կրկնուսուցից վրա և բազմաթիվ այլ ծախսեր, ինչի հետևանքով չենք կարողանում հավելյալ եկամուտը դնել տնտեսության զարգացման վրա, երկրորդ դեպքում, ունենալով այսպես ասած, դիպլոմ, խնդիր են

դնում համապատասխան աշխատանք գտնել, նոր մտածել ամուսնության մասին, բայց քանի որ մեզ մոտ կարգավորված չէ աշխատաշուկան, շատ մասնագետներ այդպես էլ տասնյակ տարիներ աշխատանք չեն գտնում, չեն ամուսնանում, որի արդյունքում էլ տուժում է գենոֆոնդը: Այն տնօրենները, որոնք խմբակների, լաբորատորիաների, առարկայական կաթինետների հատկացումը կատարում են անձնական կամ ուսուցչի շահերից ելնելով, կամ 4-5 աշակերտ ունեցող տարրական օղակի դասարաններում տալիս են ծաղկաբուծության, վայելչագրության և համանման այլ խմբակներ, իսկ մնացած հանրակրթական առարկաներից լուծեն նորմալ ցուցանիշներ, առաջարկում են նման տնօրենների գործունեությունը գնահատել որպես պաշտոնեական դիրքի չարաշահում, պետական միջոցների աննպատակ վատնում և ձեռնարկել դրանից բխող միջոցներ:

Առաջարկում եմ Պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում մի քանի անգամ ավելացնել կրակային պարապմունքները, ոչինչ չխնայել այդ ուղղությամբ, որպեսզի վաղը մարտական առաջադրանքները կատարվեն գերազանց և անկորուստ:

առավել արդյունավետ լինի, առաջարկում եմ հետևյալ պայմանները.

1. կրկնուսուցյոց չպետք է աշխատի դպրոցում, որովհետև շատ կրկնուսուցյոցներ, միաժամանակ աշխատելով դպրոցում, հիմնականում աշակերտներին չեն տալիս այն առավելագույնը, որը պահանջվում է կրթական պետական չափորոշիչներով, և խախտվում են այն աշակերտների իրավունքները, որոնց ծնողները ֆինանսապես ի վիճակի չեն վճարել կրկնուսուցման համար:

2. կրկնուսուցյոց և ծնողը պետք է պայմանագիր կնքեն և պարտավորվեն, որ որոշակի ժամանակ աշակերտի հետ պարապելուց հետո նա միասնական քննությունների ժամանակ կստանա այնպիսի գնահատական, որի համար ծնողը պարտավորվում է վճարել պահանջվող գումարը: Իսկ եթե միասնական քննության ժամանակ շրջանավարտը ստանում է ավելի ցածր գնահատական, քան նշված է պայմանագրում, ապա կրկնուսուցյոց պարտավոր է նրա ծնողին վերադարձնել այդ նպատակով ստացած գումարը:

Մարտունու շրջվարչակազմի կրթության եւ սպորտի բաժնի վարիչ՝ Զ. ՂՈՒԼՅԱՆ

ՀԱՆՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ
Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 13.09.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: